



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 23(337) «15» դեկտեմբերի 2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
280	«Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-36-Ն օրենքը.....	4
281	«Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-37-Ն օրենքը.....	5
282	«Արցախի Հանրապետության 2018-2020 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ ՀՕ-38-Ն օրենքը.....	10
	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
283	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2004 թվականի ՆՀ-149 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ նախագահի ՆՀ-154-Ն հրամանագիրը.....	30
	ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
284	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 236-Ն որոշումը.....	31
285	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 238-Ն որոշումը.....	33
286	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 239-Ն որոշումը.....	35

287	«Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 240-Ն որոշումը.....	40
288	«Մննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող նմուշառման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 18-ի N 509-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 241-Ն որոշումը.....	44
289	«Վտանգավոր սննդամթերքի և վտանգավոր կերի օգտահանման ու ոչնչացման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 18-ի N 510-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 249-Ն որոշումը.....	54
290	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 807-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 258-Ն որոշումը.....	61
291	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 958-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 259-Ն որոշումը.....	63
292	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 266-Ն որոշումը.....	76
293	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 19-ի N423-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 274-Ն որոշումը.....	79
294	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի N 61 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 275-Ն որոշումը.....	80
295	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 278-Ն որոշումը.....	81
296	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 279-Ն որոշումը.....	82
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
297	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009 թվականի մարտի 20-ի թիվ 03-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու	

	մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 17-Ն որոշումը.....	83
298	«Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության կառուցվածքը հաստատելու մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 19-Ն որոշումը.....	84
299	«Դատական կարգադրիչների ծառայության հաստիքների քանակը և պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 20-Ն որոշումը.....	85
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ	
300	ԱՀ Գերագույն դատարանի քրեական նյութ ՇԻԴ 0006/11/17 որոշումը.....	87

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
նոյեմբերի 30-ին

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի նոյեմբերի
26-ի ՀՕ-76 օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «2018» թիվը
փոխարինել «2022» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական
հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-36-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
նոյեմբերի 30-ին

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-111-Ն օրենքի
(այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Արցախի Հանրապետության պետական նախարարի և նախարարու-
թյունների աշխատակազմերում.

5) Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմին-
ների աշխատակազմերում.».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետ.

«5.1) Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի աշխատակազ-
մում.»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի իմաստով քաղաքական պաշտոններ են Արցախի
Հանրապետության Նախագահի, Արցախի Հանրապետության Ազգային
ժողովի պատգամավորների, Արցախի Հանրապետության պետական
նախարարի և նախարարների ու Արցախի Հանրապետության համայնքների
ղեկավարների պաշտոնները:».

2) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն օրենքի իմաստով հայեցողական պաշտոններ են Արցախի
Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի և նրա
տեղակալների, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի
քարտուղարի և նրա տեղակալների, Արցախի Հանրապետության Նախագահի
աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-
աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի և նրա տեղակալների,
հատուկ հանձնարարություններով դեսպանների, Արցախի Հանրապետության
Նախագահի խորհրդականների, Արցախի Հանրապետության Նախագահի
ներկայացուցիչների՝ հատուկ հանձնարարությունների գծով, Արցախի
Հանրապետության Նախագահի օգնականների, Արցախի Հանրապետության

Նախագահի մամուլի քարտուղարի, Արցախի Հանրապետության Նախագահի ռեֆերենտների, Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության խորհրդականների և օգնականների, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալի, Արցախի Հանրապետության նախարարների տեղակալների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեպարտամենտի ղեկավարի, Արցախի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանների, միջազգային կազմակերպություններին առընթեր (միջազգային կազմակերպություններում) Արցախի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների, Արցախի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների և նրանց տեղակալների, Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցչի պաշտոնները, Արցախի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների պաշտոնները, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարների և ռեֆերենտների պաշտոնները, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականների և խորհրդականների պաշտոնները, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների օգնականների պաշտոնները, Արցախի Հանրապետության պետական նախարարի և նախարարների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի, Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահի, Արցախի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների և այլն) ղեկավարների, Արցախի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների, Ստեփանակերտի քաղաքապետի, Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների պաշտոնները, Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականների և մամուլի քարտուղարի պաշտոնները:».

3) 11-րդ մասը «համարվում» բառից հետո լրացնել «Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի,» բառերով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) **բարձրաստիճան պաշտոնատար անձ**՝ Արցախի Հանրապետության Նախագահը, Արցախի Հանրապետության պետական նախարարը, Ազգային ժողովի պատգամավորները, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատ-

տակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարը և նրա տեղակալները, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալը և նրա տեղակալները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը և նրա տեղակալները, Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահը և անդամները, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկավարտամենտի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալը, Ստեփանակերտի քաղաքապետը և նրա տեղակալները, շրջանների վարչակազմերի ղեկավարները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդականները, հատուկ հանձնարարություններով դեսպանները, Արցախի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչները՝ հատուկ հանձնարարությունների գծով, Արցախի Հանրապետության Նախագահի օգնականները, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության խորհրդականները և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, ինչպես նաև Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչը.»

2) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18) **բարձրաստիճան պաշտոնատար անձի վերադաս անձ**՝ Արցախի Հանրապետության պետական նախարարի, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդականների, Արցախի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչների՝ հատուկ հանձնարարությունների գծով, հատուկ հանձնարարություններով դեսպանների, Արցախի Հանրապետության Նախագահի օգնականների, Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի համար՝ Արցախի Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի նախագահի խորհրդականների, օգնականների համար՝ Ազգային ժողովի նախագահը, Արցախի Հանրապետության պետական նախարարի խորհրդականների և օգնականների համար՝ Արցախի Հանրապետության պետական նախարարը, նախարարների տեղակալների համար՝ նախարարը, գլխավոր դատախազի տեղակալների, շրջանների, Ստեփանակերտ քաղաքի դատախազների համար՝ գլխավոր դատախազը,

Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների տեղակալների համար՝ մարմնի ղեկավարը, օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների անդամների համար՝ տվյալ մարմնի ղեկավարը, Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամների համար՝ Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահը, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալների համար՝ Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարը, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի տեղակալների, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության խորհրդականների և օգնականների, Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցչի համար՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալը, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալի համար՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալների համար՝ Ստեփանակերտի քաղաքապետը, շրջանների վարչակազմերի ղեկավարների տեղակալների համար՝ շրջանների վարչակազմերի ղեկավարները, օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների համար՝ արտաքին գործերի նախարարը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի համար՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի համար՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը: Սույն կետում չթվարկված բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքի իմաստով համարվում են վերադաս չունեցող:»:

Հոդված 4. Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովի մեկ անդամի նշանակում է Արցախի Հանրապետության Նախագահը, իսկ մյուս անդամներին Արցախի Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի նախագահի, Գերագույն դատարանի նախագահի, գլխավոր դատախազի, մարդու իրավունքների պաշտպանի ներկայացմամբ՝ յուրաքանչյուրը մեկական անդամ սկզբունքով՝ վեց տարի ժամկետով:»:

Հոդված 5. Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-37-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
նոյեմբերի 30-ին

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հաստատել Արցախի Հանրապետության 2018-2020 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 11
Ստեփանակերտ
ՀՕ-38-Ն

Հավելված
«Արցախի Հանրապետության 2018-2020
թվականների պետական վիճակագրական
աշխատանքների եռամյա ծրագիրը
հաստատելու մասին» Արցախի
Հանրապետության օրենքի

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը մշակվել է «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին համապատասխան և սահմանում է 2018-2020 թվականների պետական վիճակագրական գործունեության ուղղությունները՝ ըստ վիճակագրության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական բնագավառների:

Արցախի Հանրապետության 2018-2020 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը (այսուհետ՝ Եռամյա ծրագիր) ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի՝ Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունից ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով

պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Եռամյա ծրագրի կատարումը և ֆինանսավորումը պայմանավորված է և բխում է յուրաքանչյուր տարվա Արցախի Հանրապետության պետական բյուջեից:

ՄԱՍ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները բխում են նաև նախորդ տարիների եռամյա ծրագրերով սահմանված ռազմավարական ուղղություններից՝ միտված դրանց շարունակականության ապահովմանը:

2. Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղորդված է «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը՝ հիմնված վիճակագրության միջազգային չափանիշների և ստանդարտների վրա:

3. Համաձայն պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների՝ վիճակագրությունը պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, հանրության, բիզնեսի պահանջմունքների բավարարման համար ծրագրային աշխատանքի ընթացքում պետք է ապահովի անկողմնակալություն (անկախություն), տեղեկատվությունից օգտվելու հավասար մատչելիություն, պրոֆեսիոնալ ստանդարտներ, արդյունավետություն, հաշվետվողականություն և թափանցիկություն, սկզբնական (անվանական) տվյալների գաղտնիություն և այլն:

4. Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով մասնավորապես նախատեսվում է՝

1) վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները՝ հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը:

2) վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակել և ընդլայնել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական համագործակցությունը.

3) վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), որոնք ենթադրում են նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում.

4) վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև հնարավորինս նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը.

5) համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների կիրառմանն ու ընդլայնմանը.

6) շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման

ու ներդրման, ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները.

7) անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը.

8) վարչական ռեգիստրների (ներառյալ՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը.

9) շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները.

10) ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ իրականացնել միջոցառումներ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ.

11) բարձրացնել վստահությունը վիճակագրական տեղեկատվության նկատմամբ՝ կատարելագործելով վիճակագրության համապատասխան իրավական դաշտն ու տվյալների տարածումը, առավել խորն ուսումնասիրելով սպառողների պահանջները և կարիքները, նպաստել վիճակագրական տեղեկատվության լայնորեն օգտագործմանը, այդ թվում՝ որոշումներ ընդունելիս, մշտադիտարկում և գնահատականներ իրականացնելիս.

12) շարունակել երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական վիճակը բնութագրող ցուցանիշների գծով վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրերի, ժողովածուների և այլն) թողարկումը, ինչպես նաև ընդլայնել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական

տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով.

13) կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

ՄԱՍ 2

ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

5. Վիճակագրության ոլորտը բնութագրվում է մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, որը պայմանավորված է մի կողմից՝ տվյալների արժանահավատության, օպերատիվության, տեղեկատվության ստացման գիտական հիմնավորվածության և միջազգային չափանիշներին համապատասխանության առումով մշտապես աճող պահանջներով, մյուս կողմից՝ սկզբնական (անվանական) բոլոր տիպի տվյալների չտարածմամբ:

6. Վիճակագրության հետագա զարգացումը 2018-2020 թվականներին նախատեսվում է իրականացնել ըստ իրական, հարկաբյուջետային և ֆինանսական, արտաքին ու սոցիալ-ժողովրդագրական հատվածների:

Բ Ա Ժ Ի Ն 1 ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Գ Լ ՈՒ Խ 1 ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

7. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) «Ազգային հաշիվների համակարգ-2008» և «Եվրոպական հաշիվների համակարգ-2010» միջազգային մեթոդաբանությունների համաձայն՝ ամբողջ տնտեսության, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային հատվածների

մակարդակով ազգային հաշիվների համակարգի վիճակագրության վարում և կատարելագործում.

2) «Ազգային հաշիվների համակարգ-2008» մեթոդաբանական հենքով համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալի և շարժընթացի հետընթաց վերանայումների աշխատանքների իրականացում.

3) «Ազգային հաշիվների համակարգ-2008»-ի պահանջներին համապատասխան՝ ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների հաշվարկների կատարելագործման նպատակով տեղեկատվության աղբյուրների համալրում և կատարելագործում.

4) ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) վիճակագրության վարում՝ ըստ ենթահատվածների.

5) ազգային հաշիվների վիճակագրության վարում՝ «Տնտեսական գործունեության տեսակների» դասակարգչին և «Ազգային հաշիվների համակարգ-2008»-ով սահմանվող դասակարգումներին համապատասխան.

6) համախառն ներքին արդյունքի հաշվարկը ծախսային եղանակով.

7) «Չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության և հաշվարկների կատարելագործում.

8) ազգային հաշիվների համակարգում «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակների կազմման աշխատանքների իրականացում.

9) ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների գնահատման մեթոդաբանության կատարելագործում.

10) ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարում և կատարելագործում.

11) ազգային հաշիվներում հիմնական միջոցների սպառման գնահատման մեթոդաբանության կատարելագործում:

Գ Լ ՈՒ Խ 2

ԲԻԶՆԵՍ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

8. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) «Տնտեսական գործունեության տեսակների» և «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» դասակարգիչներին համապատասխան վիճակագրության վարում.

2) վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման մեթոդաբանության շարունակական կատարելագործում և դրա համադրելիության ապահովում՝ գործող միջազգային չափանիշներին և ստանդարտներին համապատասխան.

3) վիճակագրական տվյալների որակի բարձրացման և ամբողջականության ապահովման նպատակով չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատման կիրառվող գործիքակազմի մեթոդաբանական կատարելագործում.

4) ըստ տնտեսական գործունեության տեսակների տնտեսավարող միավորների վիճակագրական ռեգիստրի կարգավորում և շարունակական արդիականացում.

5) ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և ընտրանքային համամասնությունների տեղեկատվության հավաքագրման, մշակման ու ամփոփման ընտրանքային դիտարկումների գործիքի շարունակական ընդլայնում և ընտրանքային դիտարկման դաշտի ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով դրանց պարբերաբար արդիականացում.

6) գործունեություններ իրականացնելու համար համապատասխան վարչական լիազորությունների տիրապետող մարմինների կողմից տրված լիցենզիաների և թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման աշխատանքների իրականացում.

7) վարչական ռեգիստրների՝ որպես վիճակագրական տեղեկատվության աղբյուրի, կիրառման շրջանակների ընդլայնում.

8) գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների իրականացում և անցկացում:

Գ Լ ՈՒ Խ 3 ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

9. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման նպատակով դիտարկվող ապրանք-ծառայությունների կազմի, կառուցվածքի վերանայում և արդիականացում, զամբյուղում ներառված ապրանք-ծառայությունների կշիռների վերահաշվարկ, կշիռների՝ երեքից մինչև հինգ տարի պարբերականությամբ վերանայումից անցում տարեկան պարբերականության.

2) գնադիտարկման աշխատանքների օպտիմալացման նպատակով առևտրի և ծառայության յուրաքանչյուր օբյեկտում ամսական երեք գնադիտարկման փոխարեն մեկանգամյա գնադիտարկման իրականացում, բացառությամբ վառելիք և բարձր սեզոնայնությամբ միրգ ու բանջարեղեն ապրանքային խմբերի.

3) գնադիտարկման համար իրականացվող առևտրի և ծառայություն մատուցող կազմակերպությունների ընտրանքի շարունակական բարելավում՝ ըստ ներկայացուցչականության գործոնի, և ընտրված կազմակերպություններում սպառողական ապրանքների և ծառայությունների ամենամյա գնադիտարկումների շարունակական իրականացում.

4) փոքր (շարժական) համակարգիչների և նմանատիպ տեխնիկական այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև համացանցով (համացանցային առևտրի դեպքում) գնային տեղեկատվության հավաքագրման աշխատանքների ընդլայնում, առևտուր իրականացնող և ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ համագործակցությամբ ըստ ապրանքային ծածկագրերի գնային տեղեկատվության ստացում՝ էլեկտրոնային կրիչներով կամ այլ տեխնիկական միջոցներով.

5) արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության շարունակական կատարելագործում, հետազոտման դաշտի ընդլայնում, դիտարկվող արդյունաբերական կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների ընտրանքի վերանայում, գների

հետազոտության կազմակերպում՝ միջազգային չափանիշներին ու դասակարգումներին համապատասխան.

6) «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» դասակարգչի ինը նիշ մակարդակին համապատասխան արտադրատեսակների ընտրանքի ու դասակարգման իրականացում՝ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման համար:

Գ Լ ՈՒ Խ 4 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

10. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) զբաղվածության և աշխատավարձի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման մեթոդների և գործիքակազմի շարունակական կատարելագործում (հատկապես՝ աշխատուժի հետազոտության գործիքի ներքո) և դրա համադրելիության ապահովում՝ գործող միջազգային չափանիշներին և ստանդարտներին համապատասխան.

2) վարչական ռեգիստրների տվյալների կիրառման շրջանակի ընդլայնում, այդ թվում՝ Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ անձնավորված հաշվառմամբ վարձու աշխատողների տեղեկատվական շտեմարանի վիճակագրական նպատակով օգտագործում.

3) աշխատանքի վիճակագրության մեթոդաբանության և էլքային ցուցանիշների համակազմի հնարավորինս ներդաշնակեցում (մոտարկում): Մասնավորապես, նախատեսվում է՝

ա. աշխատանքի շուկայի վերաբերյալ տվյալների հավաքագրման ռազմավարության վերանայում, աշխատանքի շուկայի ցուցանիշների կազմի և շրջանակի վերանայում և ընդլայնում՝ գործող միջազգային չափանիշներին և ստանդարտներին համապատասխան,

բ. թափուր աշխատատեղերի, նոր ստեղծված աշխատատեղերի, աշխատանքային միգրացիայի, աշխատողների մասնագիտական ուսուցման, աշխատանքի պայմանների վիճակագրության բարելավում,

գ. թաքնված զբաղվածության չափերի, գյուղացիական տնտեսություններում զբաղվածության գնահատման մեթոդաբանության, աշխատավարձի, վաստակի,

աշխատաժամերի, աշխատանքի գնի վիճակագրության կատարելագործում.

4) տնային տնտեսություններում և առևտրային փոքր կազմակերպություններում աշխատուժի ընտրանքային հետազոտությունների ներդրում՝ միտված ցուցանիշների մանրամասնեցվածության խորացմանը:

Գ Լ ՈՒ Խ 5 ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ

11. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) վարչական ռեգիստրների (մասնավորապես՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն և այլն) կողմից վարվող տվյալների բազաների հիման վրա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով բիզնես ռեգիստրի բազայի ամբողջականացման ապահովում և դրանում ներառված ցուցանիշների պարբերաբար արդիականացում՝ համաձայն միջազգային ընդունված չափորոշիչների.

2) բիզնես ռեգիստրի բազայի ծրագրային ապահովման շարունակական կատարելագործում՝ ուղղված պետական վիճակագրության ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրարկման ընդլայնմանը.

3) բիզնես ռեգիստրի բազայում առկա ցուցանիշների որակի բարձրացման նպատակով ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքագրվող տեղեկատվության մշակման գործիքների կատարելագործում:

Գ Լ ՈՒ Խ 6 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

12. Նախատեսվում է իրականացնել «Տնտեսական գործունեության տեսակների» դասակարգչին համապատասխան առևտրային կազմակերպությունների ֆինանսների վիճակագրության վարում:

Բ Ա Ժ Ի Ն 2

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

13. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) պետական ֆինանսների (համախմբված, պետական և համայնքների բյուջեների և դրանց տարրերի) վիճակագրության վարում և կատարելագործում՝ միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին համապատասխան.

2) ֆինանսական միջնորդության հատվածի վիճակագրության վարում և կատարելագործում:

Բ Ա Ժ Ի Ն 3

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

14. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) ապրանքների գծով արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության վարում՝ «Ապրանքների արտաքին առևտրի վիճակագրություն. հասկացություններ և սահմանումներ, 2010» ձեռնարկի դրույթների և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության և փոխադարձ առևտրի վիճակագրության վարման միասնական մեթոդաբանությանն ու «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի» դասակարգչին համապատասխան.

2) վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների կազմում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6» մեթոդաբանությանը համապատասխան.

3) իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հաշվառման դաշտի բարելավում և ցուցանիշների գնահատման կատարելագործում՝ միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին համապատասխան (այդ թվում՝ վարչական վիճակագրություն վարող լիազոր մարմնի հետ համատեղ).

4) «Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրություն, 2010» ձեռնարկի դրույթներին

համապատասխան միջազգային ծառայությունների վիճակագրության վարում.

5) միջազգային և ներքին զբոսաշրջության վիճակագրության վարում:

Բ Ա Ժ Ի Ն 4

ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Գ Լ ՈՒ Խ 1

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

15. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, սոցիալական ապահովության և սոցիալ-ժողովրդագրության այլ բնագավառների վիճակագրական հաշվառման ամբողջականացման նպատակով վարչական ռեգիստրների ձևավորմանը մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում և վարչական ռեգիստրների տվյալների օգտագործման ընդլայնում.

2) բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության ոլորտի վիճակագրության բարելավում, վարչական ռեգիստրների ձևավորմանը մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում և վարչական ռեգիստրների տվյալների օգտագործման ընդլայնում:

Գ Լ ՈՒ Խ 2

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) տնային տնտեսությունների պարբերական ընտրանքային հետազոտությունների անցկացում և մեթոդաբանության կատարելագործում Համաշխարհային բանկի մշակած մեթոդաբանական զարգացումների ներքո.

2) աղքատությունը և սոցիալական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների ամբողջականացման և արդիականացման նպատակով տնային տնտեսությունների հետազոտությունների ընտրանքի ավելի բարձր ներկայացուցչականության ապահովում տարածաշրջաններով.

3) աղքատության բազմաչափ համաթվի գնահատում և դրա՝ որպես աղքատության չափման այլընտրանքային մեթոդի, կիրառման շարունակական կատարելագործում:

4) աղքատության նյութական և ոչ նյութական (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և բնակարանային պայմաններ) ցուցանիշների վարման շարունակականության ապահովում ու կատարելագործում:

5) տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների ժամանակ հատուկ մոդուլներով (մոդուլային հարցաթերթերով) աղքատության խորացված գնահատման իրականացում, այդ թվում՝ երեխաների շրջանում սոցիալական բացառումների, երեխաների կարիքների, երեխաների մարդաչափական չափումների, աղքատության քարտեզագրման, անհատական մակարդակով տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիության վերաբերյալ ցուցանիշների կազմի ու բովանդակության ամբողջականացում և կատարելագործում:

Գ Լ ՈՒ Խ 3

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

17. Նախատեսվում է միջազգային մեթոդաբանության համաձայն իրականացնել պարենային ապահովության վիճակը բնութագրող ցուցանիշների համակարգի (պարենի առկայություն, մատչելիություն և իրացվելիություն) շարունակական կատարելագործում և դրա հիման վրա ազգային պարենային հաշվեկշիռների պարբերական կազմում:

Գ Լ ՈՒ Խ 4

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

18. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) բնակչության բնական շարժի՝ քաղաքացիական կացության ակտերում ներառված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության տվյալների վիճակագրական մշակման աշխատանքների շարունակական կատարելագործում, այդ թվում՝ տվյալների մշակման գործող համակարգում Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի

գրանցման տարածքային ստորաբաժանումների միջոցով փոխանցվող էլեկտրոնային տվյալների ներդրում և էլքային աղյուսակների ստացման ապահովում.

2) բնակչության մեխանիկական տեղաշարժերի՝ միգրացիայի վարչական հաշվառման տեղեկատվական շտեմարանների ամբողջականացման ապահովմանը մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում.

3) բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ էլքային տվյալների ստացման համար մեքենայական մշակման ծրագրերի կատարելագործման ուղղությամբ աշխատանքների իրականացում.

4) ժողովրդագրական իրավիճակի գնահատման այլընտրանքային աղբյուրների ձևավորման, այդ թվում՝ արտագնա միգրացիոն միտումների և փորձառությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով նախապատրաստական աշխատանքների իրականացում:

Գ Լ ՈՒ Խ 5

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

19. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման ու կենսագործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ ոլորտին առնչվող տեղեկատվական շտեմարանների ամբողջականացում և վարում, համապատասխան վարչական ռեգիստրների կատարելագործմանն օժանդակություն.

2) բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության գնահատման ցուցանիշների և տեղեկատվական շտեմարանների ձևավորում.

3) շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ վիճակագրական հրապարակումների թողարկում, դրանցում աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրում:

ՄԱՍ 3

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

20. Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների ներդրման գործընթացում շարունակական բնույթ կկրեն հետևյալ միջոցառումները.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործընթացի իրականացում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգի շրջանակում.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում ժամանակակից համակարգչային սարքավորումներով և համապատասխան տեխնիկական միջոցներով համալրման աշխատանքների շարունակականության ապահովում.

3) տեղային համակարգչային ցանցերի արդիականացման, օպտիկական մալուխներով համալրման, ժամանակակից համակարգչային սարքավորումներով ու ծրագրային փաթեթներով հանդերձավորման աշխատանքների կազմակերպում և իրագործում.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի և վիճակագրական տեղեկատվական շտեմարանների շարունակական արխիվացում.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության «www.stat-nkr.am» պաշտոնական կայքէջի արդիականացման աշխատանքների շարունակում, վիճակագրական ցուցանիշների շտեմարանի ընդլայնում, վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների (ռեսպոնդենտների) և սպառողների համար ինտերակտիվ շփման համակարգի ներդրում և զարգացում, ներառյալ՝ վիճակագրական հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգի մշակում.

6) վիճակագրական դիտարկման աշխատանքներում օգտագործվող համակարգչային ծրագրերի շարունակական բարելավում.

7) համակարգչային նոր ծրագրային փաթեթների ներդրում և շահագործում.

8) վիճակագրական տվյալների՝ միկրոտվյալների, մակրոտվյալների և մեթատվյալների բազաների ստեղծում, ինչպես նաև կորպորատիվ հիմնապաշարի ստեղծում, որը ներառելու է հրապարակվող վիճակագրական ցուցանիշների ողջ ցանկը.

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի տեղեկատվական անվտանգության և անխափան աշխատանքների շարունակում՝ ապահովելով վիճակագրական գաղտնիք համարվող տվյալների անանունությունը և անվանազերծումը:

ՄԱՍ 4

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

21. Վիճակագրության բնագավառում համագործակցությունը ներառում է տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև ներուժ ստեղծելու նպատակով դրանց տարածումը վիճակագրական տվյալների հետագա օգտագործման համար:

Համագործակցության հիմնական նպատակներն են՝

1) առանցքային ոլորտներում վիճակագրական տվյալների առավել լայն և արդյունավետ օգտագործումը տնտեսական, սոցիալական, բնապահպանական և ժողովրդագրական զարգացման բնագավառներում, ինչպես նաև ներդրումների ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրման, որոշումների ընդունման և վերահսկման համար հիմք ստեղծելու նպատակով.

2) նախապատվային բնագավառներում վիճակագրական ներուժի և կարողությունների ամրապնդումը վիճակագրական տվյալների կազմման, ինչպես նաև դրանց հրապարակման համար.

3) համակարգերի և ներուժային հնարավորությունների աջակցմանն ու ընդլայնմանն ուղղված կարողության երկարաժամկետ ծրագրերի ապահովումը:

22. Վիճակագրական համագործակցության շրջանակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հիմնական խնդիրներն են՝

1) էապես բարձրացնել վիճակագրական արտադրանքի որակը ժամանակակից տեղեկատվության պահանջներին համահունչ:

2) բարձրացնել տվյալների արդիականությունը՝ ապահովելով սպառողների կարիքների հաշվառումը և բավարարումը:

3) բարձրացնել տվյալների արժանահավատությունը՝ ուսումնասիրելով միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդաբանությունը:

4) ապահովել վիճակագրական չափանիշների և կանոնների համաձայնեցումը միջազգային չափանիշներին և կանոններին:

5) ապահովել տվյալների միջազգային համադրելիությունը:

6) բարձրացնել վստահությունը վիճակագրական տեղեկատվության նկատմամբ՝ ձևավորելով վիճակագրության համապատասխան իրավական դաշտ, կատարելագործելով տվյալների տարածումը, ծանոթացնելով սպառողներին վիճակագրության դերին ազատական տնտեսակարգում և նպաստել վիճակագրական տեղեկատվության լայնորեն օգտագործմանը ցանկացած բնագավառում որոշումներ ընդունելիս, մոնիթորինգ և գնահատականներ իրականացնելիս:

7) որոշել վիճակագրական գործունեության ֆինանսավորման նոր ուղիները երկրում ֆինանսավորման կայուն համակարգ ստեղծելու նպատակով, մշակել և ներդնել վճարովի վիճակագրական ծառայությունների համակարգ:

8) մշակել և ներդնել պրոֆեսիոնալ վարվելակերպի սկզբունքները:

23. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության համագործակցության գերակայությունների շարքին են դասվում վիճակագրության հետևյալ բնագավառները:

1) վիճակագրական կարողությունների ամրապնդում:

2) վիճակագրական ենթակառուցվածք (դասակարգումներ, ստանդարտներ և վիճակագրական ռեգիստրներ):

3) վիճակագրական համակարգերի կառավարման հարցեր (վիճակագրական օրենք, վիճակագրական տվյալների արտադրման արդյունավետություն).

4) որակի կառավարում.

5) մակրոտնտեսական վիճակագրություն.

6) արտաքին առևտրի վիճակագրություն.

7) բիզնես վիճակագրություն.

8) էներգետիկայի վիճակագրություն.

9) գյուղատնտեսության վիճակագրություն.

10) սոցիալական, ժողովրդագրական և աշխատանքի շուկայի վիճակագրություն.

11) աղքատության վիճակագրություն.

12) գենդերային վիճակագրություն.

13) շրջակա միջավայրի վիճակագրություն.

14) հորիզոնական ոլորտներ (աշխատանք ռեսպոնդենտների (ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում) և սպառողների (նախաձեռնողական քաղաքականության իրականացում) հետ, սպառողներին ուղղված տեղեկատվության տարածում, Ազգային վիճակագրական համակարգի կառավարում և համակարգում, անձնակազմի ուսուցում).

15) ինստիտուցիոնալ ենթակառուցվածք (տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ, բյուջետային և մարդկային ռեսուրսներ):

ՄԱՍ 5

ԿԱՂԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

24. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության ուսուցման քաղաքականությունը հիմնված է ուսուցման ծրագրերի վրա՝ կողմնորոշված դեպի անձնակազմի կարիքներն ու պահանջները և նպատակաուղղված գիտելիքների, հմտությունների, փորձի և տեղեկատվության փոխանակմանը:

25. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը կշարունակի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացը՝ ընդգրկելով աշխատակազմի ինչպես կառուցվածքային, այնպես էլ առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցներին,

ինչը կարտահայտվի Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության և նրա միջոցով միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին և աշխատանքային հանդիպումներին մասնակցությամբ:

26. Առաջնորդվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման և զբաղեցրած պաշտոններին համապատասխանության որոշման նպատակով կշարունակվեն վերապատրաստման և աստեսավորման գործընթացները:

ՄԱՍ 6

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

27. Պետական վիճակագրության ոլորտում 2018-2020 թվականներին իրականացման ենթակա հետևյալ և այլ միջոցառումների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական եղանակներով (աղբյուրներից).

1) պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման համար՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով (ներառյալ՝ ոչ հարկատուների տրամադրած միջոցները).

2) պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերից դուրս իրագործվող լրացուցիչ աշխատանքների համար՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող, ինչպես նաև ոչ հարկատուների տրամադրած միջոցներով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՀ-149 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագիրը **ո ր ո շ ու մ եմ**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2004 թվականի դեկտեմբերի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության դրոշի մասին» ՆՀ-149 հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանագրի վերնագրում, նախաբանում, 1-ին և 2-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) հրամանագրով հաստատված կանոնադրության և նկարագրության վերնագրերում ու տեքստերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

3) հրամանագրով հաստատված նկարագրության տեքստում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «ԱՀ» հապավումով:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 13
Ստեփանակերտ
ՆՀ-154-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2017թ.

N 236-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N2 հավելվածի N1 աղյուսակում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1
ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ վիակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՑԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	-	6,500,0
	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	-	6,500,0
		1	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	-	6,500,0
		02	Մարզական միջոցառումներ	-	-	-	6,500,0
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	6,500,0
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	(6,500,0)
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(47,208,1)
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(47,208,1)
		03	Պետական աջակցություն ԼՂՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	-	-	(47,208,1)
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	-	-	(15,000,0)
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	-	(32,208,1)
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	40,708,1
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	40,708,1
		01	Պետական աջակցություն արտասահմանյան բուհերում ԼՂՀ-ից նպատակային ուսումնառություն ստացող ուսանողներին	-	-	-	22,208,1
			ԼՂՀ կառավարություն	-	-	-	22,208,1
		08	Կրթական բարեփոխումների միջոցառումներ	-	-	-	18,500,0
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	18,500,0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2017թ.

N 238-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 853-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ներդրումների գնահատման, արտոնության տրամադրման և կիրառման կարգը, «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովի կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 124 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 853-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերն իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձևերով.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի դեկտեմբերի 6-ի N 238-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության «30» դեկտեմբերի
2009թ. թիվ 853-Ն որոշման

Կ Ա Ջ Մ

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 38-ՐԴ ՀՈՂՎԱԾՈՎ ԼԱՌԱՏԵՄՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ
ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար (հանձնաժողովի նախագահ)
2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)
3. Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի սոցիալ-տնտեսական վարչության պետ
4. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության պետ
5. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի պետական գույքի կառավարման վարչության պետ
6. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի տնտեսական զարգացման վարչության պետ
7. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի հարկային վարչարարության մեթոդաբանության և հարկ վճարողների իրազեկման բաժնի պետ
8. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային բաժնի պետ
9. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային-կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ
10. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի տնտեսական զարգացման վարչության գործարար և ներդրումային միջավայրի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՌԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2017թ.

N 239-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ**։

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի «Ավիացիոն անվտանգության միջգերատեսչական հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» N 386-Ն որոշմամբ հաստատված հավելվածի

1) 3-րդ կետի 2-րդ ենթակետում և 16-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով։

2) 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարը» բառերով։

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օդանավակայանում անցագրային և ներօբյեկտային վերահսկողության կարգը հաստատելու մասին» N 388-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

1) 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով։

2) 24-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով։

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի հրդեհային անվտանգության ապահովման մասին հրահանգը հաստատելու մասին» N 389-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն» բառերը դրանց համապատասխան հոլովածներով

փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Օդային երթնեկության կազմակերպման, աերոնավիգացիոն կապի և դիտարկման, աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովման, աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություն իրականացնող կազմակերպություններին թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» N 1045-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով.

2) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարար» բառերը դրանց համապատասխան հոլովածներով փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով.

3) Ձև N 1-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարար» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով.

4) Ձև N 2-ում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄՍԻՎԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ» և «MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF NAGORNO-KARABAKH» բառերը համապատասխանաբար փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄՍԻՎԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ И ПРОИЗВОДСТВЕННЫХ ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРЦАХ» և «MINISTRY OF ECONOMY AND INDUSTRIAL INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARTSAKH» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարար», «Министр экономики Нагорно-Карабахской республики» և «Minister of economy of the republic of Nagorno-Karabakh» բառերը համապատասխանաբար փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար», «Министр экономики и производственных инфраструктур Республики Арцах» և «Minister of economy and industrial infrastructures of the Republic of Artsakh» բառերով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման, վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումները սպասարկող կազմակերպություններին թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» N 1046-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով.

2) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով:

3) Ձև N 1-ում և Ձև N 2-ում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF NAGORNO-KARABAKH» և «МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ» բառերը համապատասխանաբար փոխարինել «ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «MINISTRY OF ECONOMY AND INDUSTRIAL INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARTSAKH» և «МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ И ПРОИЗВОДСТВЕННЫХ ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРЦАХ» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար», «Minister of economy of the republic of Nagorno-Karabakh» և «Министр экономики Нагорно-Карабахской республики» բառերը համապատասխանաբար փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար», «Minister of economy and industrial infrastructures of the Republic of Artsakh» և «Министр экономики и производственных инфраструктур Республики Арцах» բառերով:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օդանավակայանային և թռիչքների աերոնավիգացիոն սպասարկման սակագների հաստատման կարգը սահմանելու մասին» N 345-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով:

2) 18-րդ և 20-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգը սահմանելու մասին» N 539-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 6-րդ կետի երկրորդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով:

2) 10-րդ և 60-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով:

3) 34-րդ և 36-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությանը», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությանը», «Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը», «Արցախի Հանրապետության ոստիկանությանը», «Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը» և «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը» բառերով:

4) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարը» բառերը դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարը» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օդանավակայաններում օդանավերի և օբյեկտների պահպանության կարգը հաստատելու մասին» N 540-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

1) 11-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով:

2) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար» բառերը դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Օդային փոխադրումներին առնչվող ընթացակարգերի պարզեցման ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 953-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն», «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն», «Արցախի Հանրապետության ոստիկանություն» և «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Օդային փոխադրումներին առնչվող ընթացակարգերի պարզեցման ազգային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 954-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 4-րդ կետի 3-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին» բառերով:

2) 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարն» բառերով:

3) 17-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով:

4) 20-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 դեկտեմբերի 2017թ.

N 240-Ն

ք. Ստեփանակերտ

**ԶՎԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱՍՏԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Անասնաբուժության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ
ՁՎԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են սննդում օգտագործվող հավի, հնդկահավի, լորի, ջայլամի և խայտահավի ձվերի (այսուհետ՝ ձու) գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում (այսուհետ՝ շուկա) իրացման փուլերում իրականացվող անասնաբուժասանիտարական փորձաքննության հետ կապված հարաբերությունները:

2. Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննություն կատարում են «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» գործունեության լիցենզիա ստացած ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը:

3. Շուկաներում իրացման համար նախատեսված ձվերը ենթակա են անասնաբուժասանիտարական փորձաքննության:

4. Անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված ձու իրացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

5. Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացումը շուկաներում՝ ապահովում են ձու իրացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը:

6. Շուկաներում իրացման համար նախատեսված ձուն անասնաբուժասանիտարական փորձաքննության է ներկայացվում անասնաբուժական ծառայության կողմից տրված անասնաբուժական վկայականով, իսկ շրջանի տարածքում ձու իրացնելու դեպքում՝ անասնաբուժական տեղեկանքով, որոնցով հաստատվում է տվյալ խմբաքանակի թռչունների վարակիչ հիվանդությունների նկատմամբ ապահով տարածքներից ստացումը:

II. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ձվի արտաքին զննում**՝ կենդանական ծագում ունեցող մթերքի որակի ակնադիտորեն որոշում:

2) **ձվի պարունակության հետազոտում**՝ ձվի ներքին կառուցվածքի որոշում և փոփոխությունների հայտնաբերում:

3) **օվոսկոպիա**՝ ձվի պարունակության որակի ստուգում:

III. ՁՎԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

8. Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննությունն իրականացվում է արտաքին զննման և օվոսկոպիայի միջոցով, իսկ կասկածելի դեպքերում հետազոտվում է ձվի պարունակությունը:

9. Ձվի արտաքին զննմամբ հայտնաբերվում են աղտոտվածությունը, երեսանց կտրվածքը (փոքր ճեղք), տրորված կողքը (կճեպի վնասվածք՝ ենթակճեպային թաղանթների ամբողջականության դեպքում), հոսքը (ենթակճեպային թաղանթի և կճեպի վնասվածքով ձու):

10. Ձվի արտաքին զննման արդյունքում որակյալ է համարվում մաքուր, ամբողջական, առանց կողմնակի հոտի, բնական գույնով (սպիտակ, դարչնագույն, բաց դեղնավուն, խայտահավերինը՝ խայտաբղետ և այլն) ձուն:

11. Օվոսկոպիայով ստուգվում է ձվի պարունակությունը՝ լուսադիտման եղանակով, հատուկ սարքով (օվոսկոպ): Ձուն տեղադրվում է օվոսկոպի անցքում և,

պատելով երկար առանցքի շուրջ, դիտվում ներքին կառուցվածքն ու փոփոխությունների առկայությունը:

12. Օվոսկոպիայով հայտնաբերվում են անգեն աչքով անտեսանելի մանր ճեղքվածքները, ցամաքեցումը, սպիտակուցի ու դեղնուցի վիճակը և այլ թերությունների առկայությունը:

13. Օվոսկոպիայի արդյունքում որակյալ է համարվում առանց սույն կարգի 12-րդ կետում նախատեսված թերությունների, մինչև 9 միլիմետր օդային խցիկով ձուն:

14. Չվի պարունակության հետազոտմամբ ստուգվում է կոտրված ձվի պարունակությունը:

15. Չվի պարունակության հետազոտմամբ որոշվում է ձվի ներքին կառուցվածքը, և հայտնաբերվում են առկա փոփոխությունները:

16. Չվի պարունակության հետազոտման արդյունքում որակյալ է համարվում մաքուր, մածուցիկ, լավ արտահայտված խիտ շերտով (թույլատրվում է թուլացված), առանց պղտորության, սպիտակ կամ թեթևակի կանաչավուն երանգով, մաքուր դեղնուցով, մածուցիկ, հավասարաչափ դեղին կամ նարնջագույն ներկված, առանց կողմնակի հոտերի, առանց զարգացման նշանների սաղմ ունեցող ձուն:

17. Չվերը, կախված որակից, դասվում են սննդային լիարժեք, սննդային ոչ լիարժեք և տեխնիկական խոտան ունեցող խմբերի:

18. Սննդային լիարժեք է համարվում թարմ, որակյալ, մաքուր, ամբողջական կճեպով, մինչև 9 միլիմետր օդային խցիկի բարձրությամբ, թանձր, լուսանցվող սպիտակուցով (թույլատրելի է թուլացված լուսանցում), ամուր, քիչ տեսանելի, կենտրոնական դիրք (թույլատրելի է տեղաշարժում) զբաղեցնող դեղնուցով ձուն:

19. Սննդային ոչ լիարժեք է համարվում չորացուկով (առանց բորբոսի՝ կճեպին չորանալով կպչող դեղնուցով), խառնված (դեղնուցի և սպիտակուցի մասնակի խառնակազմ), փոքր բծով՝ կճեպի ընդհանուր մակերևույթի մեկ հինգերորդից ոչ ավելի կճեպի տակ մեկ կամ մի քանի անշարժ բծերի առկայությամբ, կողմնակի, արագ անհետացող հոտով ձուն:

20. Տեխնիկական խոտան ունեցող է համարվում մեծ բծով՝ կճեպի ամբողջ մակերեսի մեկ հինգերորդ ընդհանուր չափից ավելի կճեպի տակ մեկ կամ մի քանի անշարժ բծերի առկայությամբ, պղտոր (տամուկ) անթափանց, նեխած պարունակությամբ, սպիտակուցի և դեղնուցի ամբողջական միախառնմամբ (կրայուկ), արյունաբիծ, բորբոսի հոտ կլանած կամ բորբոսնած մակերես ունեցող կճեպով, միրածային՝ ինկուբատորից հանված, չբեղմնավորված ձուն:

21. Շուկաներում իրացման համար թույլատրվում է սննդային լիարժեք ձուն:

22. Սննդային ոչ լիարժեք ձուն վաճառքի չի թույլատրվում, սակայն կարող է օգտագործվել հացաբուլկեղենի, հրուշակեղենի և այլ արտադրություններում, բարձր ջերմային մշակմամբ արտադրանքի պատրաստման համար:

23. Չվի պարունակության հետազոտման համար ձվի նմուշները վերցվում են ապրանքախմբի յուրաքանչյուր միավորից՝ հետևյալ քանակներով՝ մինչև 360 հատ ձվի դեպքում՝ մեկ հատ ձու, 360 հատ ձվից ավելի և յուրաքանչյուր 360 հատ ձվի խմբաքանակ կազմող ձվերի դեպքում՝ ևս մեկական ձու: Նմուշներ վերցնելիս՝ կազմվում է արձանագրություն, որում նշվում են նմուշներ վերցնելու նպատակը, նմուշների քանակը և ձվի տեսակը: Արձանագրությունը կազմվում է երեք օրինակից, որոնք ստորագրվում են նաև իրացնող անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, և մեկ օրինակը տրվում է նրան:

24. Նմուշները հետազոտվում են վերցնելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Մինչև հետազոտության արդյունքների ստացումը՝ իրացման համար նախատեսված ձուն պահվում է մեկուսացված՝ անհրաժեշտ պայմաններում, ոչ ավելի, քան +4 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանից մինչև +8 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանում: Չվի անասնաբուժասանիտարական պիտանիության անասնաբուժասանիտարական փորձաքննության մասին եզրակացությունը տրվում է հետազոտության ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում:

25. Անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքների հիման վրա տրվում է ձվի անասնաբուժասանիտարական պիտանիության անասնաբուժասանիտարական փորձաքննության մասին եզրակացություն, որը կազմվում է երկու օրինակից, և մեկ օրինակը տրվում է իրացնողին: Անասնաբուժասանիտարական փորձաքննության մասին եզրակացության ձևը հաստատում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

26. Դրական եզրակացության արդյունքում անասնաբուժասանիտարական տեսակետից պիտանի (սննդային լիարժեք) ճանաչված ձվի իրացման համար տրվում է անասնաբուժասանիտարական տեսակետից պիտանիությունը հաստատող պիտակ, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը:

27. Անասնաբուժասանիտարական փորձաքննության բացասական արդյունքների հիման վրա անասնաբուժասանիտարական տեսակետից պայմանական պիտանի (սննդային ոչ լիարժեք) ձվերն օգտագործվում են սույն կարգի 22-րդ կետին համապատասխան, ոչ պիտանի (տեխնիկական խոտան) ճանաչվելու դեպքում դրանք ոչնչացվում կամ ուղարկվում են վերամշակման՝ կերային այլուրի ստացման համար, անասնաբուժասանիտարական փորձաքննության մասին եզրակացության մեջ նշելով եղանակները, և դրա մասին տեղում, տիրոջ ներկայությամբ, սահմանված կարգով կազմվում է ակտ:

28. Նույն օրը չիրացված ձուն, որը չի պահպանվել համապատասխան պայմաններում, հաջորդ օրը՝ վաճառքից առաջ ենթարկվում է կրկնակի անասնաբուժասանիտարական փորձաքննության:

29. Տեխնիկական խոտան ճանաչված ձուն ենթակա է ոչնչացման՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանված կարգի համաձայն:

30. Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքները գրանցվում են անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքների գրանցամատյանում, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 դեկտեմբերի 2017թ.

N 241-Ն

ք. Ստեփանակերտ

ՄԱՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 509-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մանդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասին,
«Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ
հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝
Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է:**

1. Հաստատել սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության
ուղորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող
նմուշառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2009 թվականի օգոստոսի 18-ի «Մանդամթերքի,
անասնակերի, սննդային և կերային հավելումների փորձաքննության
նմուշառման կարգը հաստատելու մասին» N 509-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՄԱՆԻԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՄԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ
ՈՒՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են սննդամթերքի, կերի և կերային հավելումների (այսուհետ՝ ապրանք) արտադրության և շրջանառության փուլերում իրականացվող պետական վերահսկողության ընթացքում ապրանքի նմուշառման կարգը, նմուշների հաշվառմանը և պահմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև լաբորատոր փորձարկման (փորձաքննության) արդյունքների ձևակերպման և գնահատման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը ենթակա է կիրառման՝ սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ապրանքի արտադրության ու շրջանառության փուլերում գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ ապրանքը տնօրինող), ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ընտրանք**՝ ապրանքի միավորներ կամ մասեր (այսուհետ՝ նմուշներ կամ փորձանմուշներ), որոնք ընտրված են վերահսկվող ապրանքի խմբաքանակից կամ ապրանքի հոսքից՝ վերահսկողության և սահմանված պահանջներին համապատասխանության մասին եզրակացություն տալու համար:

2) **ընտրանքի ծավալ**՝ ընտրանքը կազմող տրանսպորտային և սպառողական տարաներով ապրանքի միավորների քանակ:

3) **լոտ**՝ ապրանքի որոշակի քանակ՝ արտադրված միևնույնը համարվող պայմաններում:

4) **խմբաքանակ**՝ համասեռ ապրանքի քանակություն՝ արտադրված մեկ արտադրողի կողմից՝ համանման պայմաններում, ձևակերպված մեկ ուղեկցող փաստաթղթով և առաքված միևնույն ժամանակ: Այն կարող է լինել լոտի մաս կամ մի քանի լոտերի հավաքակազմ:

5) **նմուշ**՝ նյութի մեկ կամ մի քանի միավորներ (ծավալ)՝ սահմանված միջոցներով ընտրված ամբողջությունից (լոտից, խմբաքանակից), որը թույլ է տալիս տեղեկություններ ստանալ ամբողջության տվյալ բնութագրի մասին և հիմք է ամբողջության, նյութի կամ դրանց արտադրական գործընթացի համապատասխանության մասին որոշում ընդունելու համար:

6) **նմուշառում**՝ վերահսկվող ապրանքի խմբաքանակից նմուշի առանձնացման և կազմման ընթացակարգ:

7) **պահեստային նմուշ**՝ ապրանքը տնօրինողի ցանկությամբ՝ ընտրանքի ծավալից առանձնացված նմուշ, որը ծածկագրված, կապարակնքված կամ դրոշմակնքված հանձնվում է ապրանքը տնօրինողին:

8) **սպառողական տարա**՝ տարա (շիշ, ապակե տարա, տոպրակ, բաժակ, բրիկետ և այլն), որի մեջ գտնվում է սպառողին մատակարարվող ապրանքը:

9) **տարա**՝ ապրանքը տեղավորելու համար նախատեսված փաթեթավորման տարա (արկղ, տակառ, ցիստեռն):

10) տրանսպորտային (փաթեթավորման) տարա՝ ապրանքը տեղավորելու համար նախատեսված տարա, որն առանձին միավոր է (բեռնարկ, պարկ, տուփ, շիշ):

III. ՄՆԱՍՏԹԵՐՔԻ, ԿԵՐԻ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ

4. Փորձարկման (փորձաքննության) համար նմուշառումն իրականացնում, նմուշները ծածկագրում, դրոշմակնքում կամ կապարակնքում և նմուշառման ակտը ձևակերպում է լիազոր մարմնի տեսուչը՝ ապրանքը տնօրինողի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

5. Պետական վերահսկողության իրականացման նպատակով ապրանքի խմբաքանակից կամ ապրանքի հոսքից նմուշներն ընտրվում են տվյալ ապրանքի համար Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված իրավական ակտերով, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով և չափով:

6. Նմուշառումը կատարվում և ընտրված նմուշները տեղափոխվում են պահման ու փոխադրման ժամանակ նմուշները փոփոխությունից պաշտպանող նյութերից պատրաստված համապատասխան գործիքներով և տարաներով: Դրանք պետք է պատրաստված լինեն Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ցանկում ներառված նյութերից:

7. Ընտրանքի ծավալը կազմող յուրաքանչյուր նմուշին տրվում է ծածկագիր, որը փակցվում կամ կցվում է նմուշին, իսկ նմուշները դրոշմակնքվում կամ կապարակնքվում են:

8. Տեղում նմուշառման վերաբերյալ լիազոր մարմնի տեսուչի կողմից կազմվում է նմուշառման ակտ՝ համաձայն N 1 ձևի, որտեղ նշվում են՝

- 1) նմուշառման վայրը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.
- 2) ապրանքի անվանումը, ծագման երկիրը, արտադրողի և մատակարարի (վաճառողի) անվանումները (անունը, հայրանունը, ազգանունը).
- 3) նմուշառում իրականացնող տեսուչի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը.
- 4) արտադրողի կամ ապրանքն իրացնող, պահող կամ փոխադրող կազմակերպության ներկայացուցիչների պաշտոնները, անունները, հայրանունները, ազգանունները, որոնց ներկայությամբ իրականացվում է նմուշառումը.
- 5) պիտանիության ժամկետը.
- 6) լոտի համարը և չափը (քանակը, զանգվածը, ծավալը).
- 7) ընտրված նմուշների, այդ թվում՝ պահեստային նմուշի (առկայության դեպքում) չափը (քանակը, զանգվածը, ծավալը).
- 8) նմուշառված ապրանքի պահպանման պայմանները.
- 9) տվյալ ապրանքի ստանդարտացման փաստաթղթին հղումը:

9. Նմուշները պահպանում ու տեղափոխում է լիազոր մարմնի տեսուչը՝ Արցախի Հանրապետության օրենսդրության, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով նախատեսված պահանջներով:

10. Նմուշները տրամադրվում են անհատույց, իսկ նմուշների պահպանման, տեղափոխման և փորձարկման (փորձաքննության) հետ կապված ծախսերը կատարվում են լիազոր մարմնի միջոցների հաշվին՝ բացառությամբ սահմանային վերահսկողության նպատակով իրականացվող փորձարկման (փորձաքննության) դեպքերի, որոնց ծախսերը «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կատարվում են ապրանքը տնօրինողի հաշվին:

11. Պահեստային նմուշն ի պահ է հանձնվում ապրանքը տնօրինողին: Պահեստային նմուշը պահվում է տվյալ ապրանքի համար նախատեսված համապատասխան պահման պայմաններում: Պահեստային նմուշի տեղափոխման և

փորձարկման (փորձաքննության) ծախսերը կատարվում են ապրանքը տնօրինողի հաշվին: Պահեստային նմուշը փորձարկման (փորձաքննության) է ներկայացվում ուղեկցող նամակով՝ համաձայն N 2 ձևի:

12. Ապրանքի խմբաքանակը, որից կատարվել է նմուշառում, ենթակա չէ իրացման (վաճառքի) կամ այլ կերպ օտարման՝ մինչև փորձարկման (փորձաքննության) արդյունքների ամփոփումը, եթե՝

1) կենդանական ծագում ունեցող մթերքի պահման պայմանները չեն համապատասխանում սահմանված պահանջներին:

2) ներմուծման գործընթացի նկատմամբ պետական վերահսկողության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում նմուշառմամբ և լաբորատոր փորձաքննությամբ որոշելու բեռի (բացառությամբ կենդանիների) անվտանգությունը:

IV. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊՏԱԿՈՎ ՆՍՈՒՇՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

13. Լիազոր մարմնի տեսուչը փորձարկման (փորձաքննության) նպատակով ընտրված նմուշներն ուղեկցող նամակով (N 2 ձև) ներկայացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիա:

14. Լաբորատորիայի ներկայացուցիչն ընդունում է նմուշը՝ ստուգելով՝

1) ուղեկցող նամակի առկայությունը:

2) նմուշի փաթեթավորման պահպանվածությունը:

3) ծածկագրի և դրոշմակնիքի կամ կապարակնիքի առկայությունը:

4) ընտրված նմուշների չափի համապատասխանությունն ապրանքի և ստանդարտացման փաստաթղթերի պահանջներին:

15. Եթե լաբորատորիայի ներկայացուցիչը հայտնաբերում է, որ նմուշառումը կատարվել է սույն կարգի 14-րդ կետի պահանջների խախտմամբ, ապա նմուշները չեն ընդունվում և վերադարձվում են՝ գրավոր հիմնավորմամբ:

V. ՆՍՈՒՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՊԱՀՈՒՄԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

16. Լիազոր մարմինը և փորձարկման լաբորատորիան նմուշները հաշվառում են առանձին գրանցամատյաններում (NN 3 և 7 ձևեր):

17. Փորձարկվող նմուշների պահման ժամկետը պետք է համապատասխանի ապրանքի պիտանիության ժամկետին, որը լրանալուց հետո նմուշները Արցախի Հանրապետության կառավարության սահմանված կարգով դուրս են գրվում և ոչնչացվում:

18. Փորձարկումների ավարտից հետո փորձարկման գործընթացում օգտագործված նմուշները կամ դրանց մնացորդները, ինչպես նաև փորձարկման չենթարկված նմուշները, որոնք հետագայում կարող են օգտագործվել, լիազոր մարմնի տեսուչի միջոցով վերադարձվում են ապրանքը տնօրինողին՝ կազմելով նմուշների վերադարձման ակտ (N 4 ձև):

19. Սյն դեպքում, երբ փորձարկման ժամանակ նմուշները ծախսվել են կամ հետագայում իրենց ուղղակի նշանակությամբ օգտագործման համար պիտանի չեն, կամ լրացել է դրանց պիտանիության ժամկետը, կազմվում է նմուշների դուրսգրման ակտ (N 5 ձև):

VI. ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿՍՏԱՐՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

20. Պետական վերահսկողության նպատակով ընտրված նմուշները փորձարկվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ կամ ստանդարտացման փաստաթղթերով սահմանված պահանջներին (փորձարկման մեթոդներին) համապատասխան՝ համաձայն «Մանրամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի:

21. Եթե լաբորատորիան հնարավորություն չունի իրականացնելու նմուշի առանձին ցուցանիշների փորձարկում (փորձաքննություն), ապա այդ դեպքում տվյալ ցուցանիշների փորձարկումը (փորձաքննությունը) պայմանագրային հիմունքներով պատվիրակվում է մեկ այլ փորձարկման լաբորատորիայի, որն ունի այդ հնարավորությունը: Փորձաքննության վերջնական արձանագրությունը կազմում է այն լաբորատորիան, որտեղ հանձնվել են նմուշները:

22. Նմուշում մարդու համար վտանգավոր հելմինթային հիվանդության հարուցիչ, նրա ձվերի կամ թրթուրների նույնիսկ մեկ օրինակի հայտնաբերման դեպքում արդյունքները վերջնական են:

23. Լաբորատոր փորձաքննության իրականացման ժամկետը և տևողությունը չեն կարող գերազանցել 10 աշխատանքային օրը:

24. Լաբորատորիան նմուշների փորձարկման (փորձաքննության) ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է արդյունքները և դրանց վերաբերյալ կազմում փորձարկման արձանագրություն (N 6 ձև)՝ 3 օրինակից, որոնցից 2 օրինակն ուղարկվում է լիազոր մարմին:

25. Փորձարկման արձանագրությունն ստորագրում են փորձարկում կատարողները և լաբորատորիայի ղեկավարը: Փորձարկման արձանագրությունը վավերացվում է լաբորատորիայի կնիքով:

26. Փորձարկման արձանագրության յուրաքանչյուր էջ պարտադիր համարակալվում է՝ նշելով էջի և արձանագրության համարները:

27. Փորձարկման արձանագրության մեջ ուղղում կամ լրացում չի կատարվում: Սխալների կամ վրիպակների դեպքում կազմվում է նոր արձանագրություն, որը, որպես հավելված, կցվում է փորձարկման առաջին արձանագրությանը:

28. Պետական վերահսկողության նպատակով կատարված փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնելու դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտը կարող է դրանք բողոքարկել՝ օրենքով սահմանված կարգով:

**ԱՐՑԱՄԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

(պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի անվանումը, գտնվելու վայրը)

Ն Մ ՈՒ Շ Ա Ռ Մ Ա Ն Ա Կ Տ Ն _____

_____թ.

Ես՝ _____

(լիազոր մարմնի տեսուչի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

-ում

(ակտը կազմելու վայրը)

(ապրանքը տնօրինողի կամ նրա ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը)

_____ -ի ներկայությամբ
 պետական վերահսկողության նպատակով ընտրել եմ ապրանքի նմուշներ՝ _____
 _____ ստանդարտացման փաստաթղթին
 (ստանդարտացման փաստաթղթի անվանումը, նշագիրը)

համապատասխան:

Ապրանքն ստացված է ըստ _____

(ապրանքն ուղեկցող փաստաթղթի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Արտադրող _____

(երկիրը, կազմակերպությունը, գտնվելու վայրը)

Մատակարար _____

(երկիրը, կազմակերպությունը, գտնվելու վայրը)

Պահման տեղը և պայմանները _____

Փաթեթավորումը և մակնշումը _____

Զգայորոշման ցուցանիշների ստուգման (արտաքին զննման) արդյունքները _____

№	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Խմբաքանակի համարը	Խմբաքանակի չափը	Արտադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Պիտանիության ժամկետը	Փորձարկման կամ փորձաքննության նպատակով ընտրված նմուշի քանակը	Պահեստային նմուշի քանակը
1	2	3	4	5	6	7	8	9

Լիազոր մարմնի տեսուչ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ապրանքը տնօրինող

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ձև N2

(պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի անվանումը, գտնվելու վայրը)

Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր Ն ՈՒ Ղ Ե Կ Ց Ո Ղ Ն Ա Մ Ա Կ Ն _____

_____թ.

(լաբորատորիայի անվանումը)

(ղեկավարի անունը, ազգանունը)

Խնդրում եմ ապրանքի փորձարկման (փորձաքննության) համար կատարել _____
 _____-ին համապատասխան ընտրված՝

(նմուշառման վերաբերյալ ստանդարտացման փաստաթղթի նշագիրը)

ներքոհիշյալ ապրանքի նմուշի փորձարկում (փորձաքննություն):

NN ը/կ	Ապրանքի անվանումը	Ապրանքի նմուշների քանակը	Չափի միավորը	Նմուշի ծածկագիրը	Ցուցանիշները, ըստ որոնց պետք է կատարել փորձարկումները, և այդ ցուցանիշները սահմանող նորմատիվ փաստաթղթի նշանագիրն ու համապատասխան կետի համարը
1	2	3	4	5	6

Լիազոր մարմնի տեսուչ _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ձև N3

**Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն
 ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ
 ՀԱՄԱՐ ՎԵՐՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ**

NN ը/կ	Վերահսկող մարմնի անվանումը, նմուշառման ակտի հա- մարը, տարե- թիվը, ամիսը, ամսաթիվը	Ապրանքի անվա- նումը	Ապրանքի այիտանիու- թյան ժամկետը	Ապրանքի նմուշառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Ապրանքի նմուշների քանակը	Փորձարկում- ների ար- դյունքները (արձանա- գրության հա- մարը, տարե- թիվը, ամիսը, ամսաթիվը)	Ապրանքի նմուշների վերադարձման ակտի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8

Ձև N 4

Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Մ Ա Ն Ա Կ Տ Ն _____

_____թ.

Ես՝ _____

(հանձնող մարմնի անվանումը, հանձնողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

հանձնեցի _____-ին

(պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

նմուշները՝

(ապրանքի անվանումը)

քանակով:

Հանձնող

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Ստացող

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Ձև N 5

_____ (փորձարկման լաբորատորիայի անվանումը և գտնվելու վայրը)

**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Լաբորատորիայի ղեկավար**

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր Ի Դ ՈՒ Ր Մ Գ Ր Մ Ա Ն Ա Կ Տ Ն _____

_____թ.

_____ (ապրանքի անվանումը, ուղեկցող նամակի համարը, փորձարկվող նմուշների քանակը)

Նմուշների վիճակը փորձարկումից հետո _____

Նշված նմուշների պիտանիության ժամկետները լրացել են, և (կամ) փորձարկումների ժամանակ ապրանքի փորձարկվող նմուշները դարձել են օգտագործման համար ոչ պիտանի (ընդգծել) (հիմքը՝ փորձարկման արձանագրություն N _____, _____ թ. դրությամբ) և ենթակա են դուրսգրման:

Փորձարկման լաբորատորիայի
ներկայացուցիչներ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

(լաբորատորիայի անվանումը և գտնվելու վայրը)

**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ղեկավար**

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Փ Ո Ր Ձ Ա Ր Կ Մ Ա Ն Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____

Ապրանքի անվանումը _____թ.
(տիպը, տեսակը և այլն)

(ապրանքի ծածկագիրը)

(ստանդարտացման փաստաթղթի անվանումը և նշագիրը)

Փորձարկվող նմուշներ _____
(քանակը և նմուշների համարները)

Նմուշների ստացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
Նմուշները փորձարկման (փորձաքննության) ներկայացնողը _____

(ներկայացնողի անվանումը և գտնվելու վայրը)

ուղեկցող նամակի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը

Փորձարկման (փորձաքննության) կատարման վայրը _____

Արձանագրություն N _____ , էջ՝ _____

Փորձարկման (փորձաքննության) արդյունքները՝

NN ը/կ	Նմուշի ծածկա- գիրը	Ցուցանիշի անվա- նումը	Ցուցանիշի արժեքը սահմանող նորմատիվ փաստաթղթի համարը	Փորձարկման մեթոդը սահմանող նորմատիվ փաստաթղթի համարը	Չափի միա- վորը	Ցուցանիշի արժեքը		Եզրակացու- թյունը՝ ըստ փորձաքն- նության արդյունքների
						Ըստ նոր- մատիվ փաստա- թղթի	փաստացի ստացված	
1	2	3	4	5	6	7	8	9

(փորձարկման (փորձաքննության) ավարտը՝ տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Եզրակացություն _____-ի
(ապրանքի անվանումը)

փորձարկման նմուշները համապատասխանում են (չեն համապատասխանում) _____

(իրավական ակտի, ստանդարտացման փաստաթղթի անվանումը, նշագիրը և կետերի համարները)

պահանջներին՝ ըստ _____

(լրացվում է համապատասխան ցուցանիշների անհամապատասխանության դեպքում)

Արձանագրությունը կազմված է _____ էջից, _____ օրինակով:

Պատասխանատու կատարողներ _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Փորձարկման լաբորատորիայի
ղեկավար _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ձև N 7

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

**ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՄՏԱՑԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ**

№ ը/կ	Պետական վերահսկողության մարմնի անվանումը, ուղեկցող նամակի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Ապրանքի անվանումը	Ապրանքի պիտանիության ժամկետը	Ապրանքի նմուշի ստացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Ապրանքի նմուշների քանակը	Փորձարկումների արդյունքները (արձանագրության համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)	Ապրանքի նմուշների դուրսգրման կամ վերադարձման ակտի համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2017թ.

N 249-Ն

ք. Ստեփանակերտ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ
ՈՒ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 510-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սննդամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ, «Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ու մ է.**

1. Սահմանել վտանգավոր սննդամթերքի և վտանգավոր կերի օգտահանման ու ոչնչացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր սննդամթերքի, վտանգավոր անասնակերի, սննդամթերքի և անասնակերի հետ շփվող վտանգավոր նյութերի, վտանգավոր սննդային և կերային հավելումների օգտահանման ու ոչնչացման կարգը սահմանելու մասին» N 510-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԵՐԻ
ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՈՆՆՉԱԾՄԱՆ

I. ԿԵՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏԸ

1. Սույն կարգով կարգավորվում են վտանգավոր սննդամթերքի և վտանգավոր կերի (այսուհետ՝ վտանգավոր արտադրանք) օգտահանման ու ոչնչացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները տարածվում են նաև սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող վտանգավոր նյութերի օգտահանման և ոչնչացման հետ կապված հարաբերությունների վրա:

3. Սույն կարգը կիրառվում է սննդամթերքի և կերի (այսուհետ՝ արտադրանք) արտադրության ու շրջանառության փուլերում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ), օրենքով սահմանված կարգով հավատարմագրված լաբորատորիաների (այսուհետ՝ լաբորատորիա), ինչպես նաև օգտահանում կամ ոչնչացում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

4. «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների և իրավական այլ ակտերի պահանջների խախտումներով Արցախի Հանրապետություն ներմուծվող, Արցախի Հանրապետությունում արտադրվող, իրացվող կամ օգտագործվող արտադրանքը սննդամթերքի անվտանգության ոլորտի իրավական ակտերով սահմանված անվտանգության պահանջներին անհամապատասխանության մասով՝ վտանգավոր համարելու և վտանգավոր արտադրանքի օգտահանման կամ ոչնչացման եղանակը որոշվում է Արցախի Հանրապետության կառավարության սահմանված կարգով կատարված լաբորատոր փորձաքննության արդյունքների հիման վրա:

5. Փորձաքննության բացասական արդյունքների հիման վրա Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն (այսուհետ՝ լիազոր մարմին) արտադրանքը վտանգավոր է ճանաչում և ընդունում համապատասխան որոշում (արձակում կարգադրագիր):

6. Փորձաքննության մասին արձանագրության հիման վրա ընդունված որոշման մեջ նշվում են նաև վտանգավոր արտադրանքի վտանգի աղբյուրի վերացման կամ օգտահանման կամ ոչնչացման եղանակներն ու պայմանները:

7. Մինչև փորձաքննության մասին արձանագրությունը և արտադրանքը վտանգավոր ճանաչելու մասին լիազոր մարմնի որոշումն ստանալը՝ արտադրանքը տնօրինող տնտեսավարող սուբյեկտն արտադրանքի խմբաքանակն առանձին հաշվառում և պահում է առանձնացված պահեստարանում, սառնարանում կամ մեկուսախցում՝ ապահովելով դրա հասանելիությունը և փչացումը բացառող պայմանները:

8. Եթե վտանգավոր արտադրանքն ունի համապատասխանության սերտիֆիկատ կամ որի համապատասխանությունը հավաստված է համապատասխանության հայտարարագրով, ապա արտադրանքի վտանգավոր և (կամ) օգտահանման կամ ոչնչացման ենթակա լինելու մասին որոշման ընդունումից

հետո հնգօրյա ժամկետում լիազոր մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատ տված կամ հայտարարագիրը գրանցած մարմին:

9. Վտանգավոր արտադրանքի ոչնչացման գործընթացն իրականացնում է այն տնօրինող տնտեսավարող սուբյեկտն՝ իր միջոցների հաշվին, անձամբ կամ համապատասխան կազմակերպության միջոցով՝

1) լիազոր մարմնի կողմից ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի մասնակցությամբ, որի կազմում, հաշվի առնելով ոչնչացվող արտադրանքի տեսակը, ներգրավվում են Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության և Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության մասնագետներ, եթե Արցախի Հանրապետությունում արտադրված և (կամ) իրացվող կամ ներմուծվող վտանգավոր արտադրանքի խմբաքանակը գերազանցում է 50 կիլոգրամը կամ 50 հատը, կամ 50 լիտրը, կամ դրա ընդհանուր արժեքի 100 000 ՀՀ դրամը:

2) լիազոր մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Արցախի Հանրապետությունում արտադրված և (կամ) իրացվող կամ ներմուծվող վտանգավոր արտադրանքի խմբաքանակի՝ սույն կետի 1-ին ենթակետում չնշված այլ դեպքերում:

3) գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի դեպքում, անկախ գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի քանակությունից, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմի պարունակությունը հաստատող լաբորատոր փորձաքննության արդյունքներն ստանալուց հետո մեկօրյա ժամկետում լիազոր մարմինը գրավոր տեղեկացնում է Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը և տվյալ խմբաքանակի՝ գենետիկորեն ձևափոխված սննդամթերքը ոչնչացվում է՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության եռօրյա ժամկետում արած գրավոր առաջարկությունները:

10. Վտանգավոր արտադրանքի ոչնչացման գործընթացին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

11. Լիազոր մարմինը վտանգավոր արտադրանքի ոչնչացման ենթակա լինելու մասին որոշման ընդունման օրը ոչնչացման օրվա, ժամի և տեղի մասին տեղեկացնում է սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին:

12. Մահմանված օրը հանձնաժողովի անդամների կամ ներկայացուցչի չներկայանալու դեպքում նշանակվում է նոր ժամկետ, որը չի կարող գերազանցել հինգ օրը:

III. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՕԳՏԱՀԱՆՈՒՄԸ

13. Փորձաքննության մասին արձանագրությունը և արտադրանքը վտանգավոր ճանաչելու և (կամ) օգտահանելու մասին լիազոր մարմնի որոշումն ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում վտանգավոր արտադրանքը տնօրինող տնտեսավարող սուբյեկտը, որոշման պահանջներին համապատասխան, պարտավոր է իրականացնել դրա օգտահանումը:

14. Նշված ժամկետում օգտահանումը չկատարելու դեպքում տվյալ վտանգավոր արտադրանքը սահմանված կարգով ենթակա է ոչնչացման:

15. Վտանգավոր արտադրանքի խմբաքանակի օգտահանման մասին կազմվում է վտանգավոր արտադրանքի օգտահանման ակտ՝ համաձայն N 1 ձևի, որի մեկ օրինակն օգտահանման օրվան հաջորդող օրը հանձնվում է լիազոր մարմնին:

16. Վտանգավոր արտադրանքի խմբաքանակի օգտահանումից հետո ստացված նոր արտադրանքի օգտագործումը սեփական արտադրությունում որպես հումք և (կամ) իրացումը թույլատրվում է միայն օրենքով սահմանված կարգով դրանց անվտանգությանը ներկայացվող պահանջներին ապահովելուց հետո:

17. Եթե օգտահանումից հետո ստացված նոր արտադրանքը նախատեսվում է օգտագործել որպես կեր, ապա տնտեսավարող սուբյեկտը դա օգտագործում կամ իրացնում է միայն անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքների հիման վրա ընդունված համապատասխան որոշման առկայության դեպքում:

18. Վտանգավոր արտադրանքը տնօրինող տնտեսավարող սուբյեկտը տվյալ խմբաքանակի օգտահանումն իրականացնելու տնտեսական աննպատակահարմարության կամ տեխնիկական բարդության դեպքում կարող է ընդունել որոշում այն ոչնչացնելու մասին՝ սույն կարգի 4-րդ բաժնի պահանջներին համապատասխան:

IV. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

19. Փորձաքննության մասին արձանագրությունը և արտադրանքը վտանգավոր ճանաչելու և (կամ) ոչնչացնելու մասին լիազոր մարմնի որոշումն ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում վտանգավոր արտադրանքը տնօրինող տնտեսավարող սուբյեկտը, որոշման պահանջներին համապատասխան, պարտավոր է իրականացնել տվյալ վտանգավոր արտադրանքի խմբաքանակի ոչնչացումը:

20. Եթե վտանգավոր արտադրանքն աղտոտված է, պարունակում է հիվանդությունների տարածման կամ մարդկանց կամ կենդանիների թունավորման կամ շրջակա միջավայրի աղտոտման վտանգ, ապա ոչնչացումից առաջ կամ ոչնչացման գործընթացում այն վարակազերծվում է: Կախված աղտոտվածության ձևից՝ վտանգավոր արտադրանքը տնօրինող տնտեսավարող սուբյեկտը դիմում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններ՝ վտանգավոր արտադրանքը վարակազերծելու համար:

21. Վտանգավոր արտադրանքի ոչնչացումը ձևակերպվում է վտանգավոր արտադրանքի ոչնչացման ակտով՝ համաձայն N 2 ձևի, որի մեկ օրինակը ոչնչացման օրվան հաջորդող օրը հանձնվում է լիազոր մարմնին:

22. Եթե վտանգավոր արտադրանքի ոչնչացման մասին որոշումը բողոքարկվել է, ապա ոչնչացման գործընթացը կասեցվում է միայն այն դեպքում, երբ ոչնչացման ենթակա արտադրանքը սանիտարահամաձարակային տեսակետից վտանգավոր չէ, և առկա են հետագա փչացումը կանխող ու պահումն ապահովող համապատասխան պայմաններ:

23. Վտանգավոր արտադրանքի ոչնչացմանն ուղղված վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

24. Պետական վերահսկողության իրականացման նպատակով պահման ժամկետը լրացած փորձարկվող նմուշները և (կամ) փորձարկվող այն նմուշները, որոնք իրենց ուղղակի նշանակությամբ օգտագործման համար պիտանի չեն, ոչնչացվում են:

25. Պետական վերահսկողության նպատակով նմուշառված փորձարկվող նմուշները պահման ժամկետի լրացման կամ դրանց ուղղակի նշանակությամբ օգտագործման համար ոչ պիտանի լինելու դեպքերում ոչնչացվում են լաբորատորիայի կողմից՝ լիազոր մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովի մասնակցությամբ, որի վերաբերյալ կազմվում է փորձարկվող նմուշների ոչնչացման ակտ՝ համաձայն N 3 ձևի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը և գտնվելու վայրը)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
տնտեսավարող սուբյեկտի ղեկավար

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ա Վ Տ Ն _____

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ

_____ 20__ թվականի

(արտադրանքի անվանումը, արտադրողը և (կամ) ներմուծողը)

(խմբաբանակի նույնականացման նշանը՝ սննդամթերքի դեպքում)

(արտադրանքի քանակը, փաթեթավորման տեսակը)

Վտանգավոր լինելը հայտնաբերվել է և (կամ) դրա մասին ստացվել է տեղեկատվություն (ընդգծել) _____ կողմից, այնուհետև արտադրանքն առանձին հաշվառվել է _____:

(առանձնացված պահման պայմանները և տեղը)

Փորձաքննության մասին արձանագրության _____ (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը)

ու արտադրանքի վտանգավորության և (կամ) օգտահանման մասին լիազոր մարմնի _____ որոշման հիման վրա վտանգավոր

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը)

արտադրանքը՝ _____, օգտահանվել է _____

(արտադրանքի քանակը)

(օգտահանման վայրը, ժամանակը և եղանակը)

Օգտահանման արդյունքում ստացվել է _____

(ստացված նոր արտադրանքի անվանումը, քանակը)

փաթեթավորումը, նշանակությունը, պիտանիության ժամկետը)

Ստացված նոր արտադրանքը նախատեսվում է օգտագործել սեփական արտադրությունում որպես հումք և (կամ) իրացնել (ընդգծել):

Տնտեսավարող սուբյեկտի օգտահանման գործընթացի համար պատասխանատու

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

Օգտահանումն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչ

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

Արտադրանքը տնօրինող տնտեսավարող սուբյեկտի գլխավոր հաշվապահ

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

Լիազոր մարմնի ներկայացուցիչ (ներկայացուցիչներ)

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը և գտնվելու վայրը)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
տնտեսավարող սուբյեկտի ղեկավար

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ա Կ Տ Ն _ _ _ _ _

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՉՋԱՑՄԱՆ

_____ 20____ թվականի

(արտադրանքի անվանումը, արտադրողը և (կամ) ներմուծողը)

(խմբաբանակի նույնականացման նշանը՝ անդամթերքի դեպքում)

(արտադրանքի քանակը, փաթեթավորման տեսակը)

Վտանգավոր լինելը հայտնաբերվել է և (կամ) դրա մասին ստացվել է տեղեկատվություն (ընդգծել) _____ կողմից, այնուհետև արտադրանքն առանձին հաշվառվել է _____

(առանձնացված պահման պայմանները և տեղը)

_____ :
(դուրսգրման մասին ակտի համարը և թվականը)

Փորձաքննության մասին արձանագրության _____ և
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը)

արտադրանքի վտանգավորության մասին լիազոր մարմնի _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը)

որոշման հիման վրա վտանգավոր արտադրանքը՝ _____,
(արտադրանքի քանակը)

ոչնչացվել է _____ :
(ոչնչացման վայրը, ժամանակը և եղանակը)

Տնտեսավարող սուբյեկտի
ոչնչացման հանձնաժողովի
անդամներ _____
(ստորագրությունը) _____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

Ոչնչացումն իրականացնող
տնտեսավարող սուբյեկտի
ներկայացուցիչ _____
(ստորագրությունը) _____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

Արտադրանքը տնօրինող
տնտեսավարող սուբյեկտի
գլխավոր հաշվապահ _____
(ստորագրությունը) _____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

Համապատասխան
զերատեսչություններից
ոչնչացմանը մասնակցող
ներկայացուցիչներ _____
(ստորագրությունը) _____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

(լաբորատորիայի անվանումը և գտնվելու վայրը)

**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
լաբորատորիայի ղեկավար**

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Ա Կ Տ Ն _____

**ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՈՉՆԱՑՄԱՆ
_____ 20____ թվականի**

(արտադրանքի անվանումը, նմուշների քանակը, նմուշների ծածկագրերը)

(տեսչության կողմից տվյալ նմուշներն ուղեկցող նամակի համարը և թվականը)

(նմուշների ստացման թվականը, նմուշների գրանցամատյանի գրանցման հերթական համարը)

(պիտանիության ժամկետը, դուրսգրման մասին ակտի համարը, թվականը)

Փորձարկման լաբորատորիայի ղեկավարի 20____թվականի _____ -ի
N_____որոշմամբ սահմանված ոչնչացման եղանակով փորձարկված կամ
փորձարկվող նմուշների պահման ժամկետը լրացած նմուշները (ընդգծել) ոչնչացվել են

(ոչնչացման եղանակը, վայրը, թվականը, փորձարկման լաբորատորիայի՝ ոչնչացումն իրականացնող

հանձնաժողովի անդամների պաշտոնները, անունները, ազգանունները)

կողմից:

Հանձնաժողովի անդամներ՝

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2017թ.

N 258-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 807-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ն որոշումը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կանոնադրությունները հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 22-ի N 243 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 807-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն ստեղծելու, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչության ու Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կանոնադրությունները հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 22-ի N 243 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին».

2) որոշման 1-ին ու 2-րդ կետերում, որոշմամբ հաստատված NN 1 և 2 հավելվածների վերնագրերում և տեքստերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը իրենց հոլովածներով փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով և համապատասխան հոլովածներով, բացառությամբ N1 հավելվածի 10-րդ կետի, 13-րդ կետի 1-ին նախադասության և 18-րդ կետի և N 2 հավելվածի 10-րդ և 15-րդ կետերի.

3) որոշման N1 հավելվածի 16-րդ և N2 հավելվածի 13-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տեսչության պետը հաշվետու է նախարարին, տեսչության գործունեությունը համակարգող նախարարի համապատասխան տեղակալին (այսուհետ՝ համապատասխան տեղակալ), իսկ քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2017թ.

N 259-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 958-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագիրը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Մենդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 63 և 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 558 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու, 2004 թվականի հունիսի 22-ի N 243 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 958-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Մենդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 63 և 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 558 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու, 2004 թվականի հունիսի 22-ի N 243 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին».

2) որոշման 1-ին ու 2-րդ կետերում և 2-րդ կետով հաստատված N2 հավելվածի վերնագրում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

3) որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության, համապատասխանության գնահատման, անասնաբուժության, բուսասանիտարիայի բնագավառների պետական կարգավորումը, օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է վերահսկողական գործառնություններ և կիրառում պատասխանատվության միջոցներ այդ բնագավառում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Ծառայությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի երկրագործության պետական տեսչության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուժական և անասնապահական պետական տեսչության իրավահաջորդն է:

3. Ծառայությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

4. Ծառայության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

5. Ծառայությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

6. Ծառայությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Ծառայությունը կազմված է ծառայության պետից, պետի տեղակալ(ներ)ից, ծառայության աշխատակազմից, ինչպես նաև ծառայության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ ծառայությանը կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման (կառավարման) իրավասությունը:

8. Ծառայության անվանումն է՝

հայերեն լրիվ անվանումը՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն,

ռուսերեն լրիվ անվանումը՝ Государственная служба безопасности пищевых продуктов министерства сельского хозяйства Республики Арцах,

անգլերեն լրիվ անվանումը՝ State service for food safety of the Ministry of Agriculture of the Artsakh Republic,

հայերեն կրճատ անվանումը՝ ԱՀԳՆ ՍԱՊԾ,
ռուսերեն կրճատ անվանումը՝ ГСБПП МСХРА,
անգլերեն կրճատ անվանումը՝ SSFS MAAR:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Ծառայության նպատակներն ու խնդիրները սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների պետական կարգավորումն է, որը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) սպառողների առողջության համար սննդամթերքի հնարավոր վնասակար ազդեցությունից պաշտպանության նպատակով սննդի շղթան (արտադրությունից մինչև սպառումը) որպես մեկ միասնական ամբողջություն դիտարկելն է («Ֆերմայից մինչև պատառաքաղ» կամ «դաշտից մինչև սեղան» սկզբունքը)։

2) սննդամթերքի արտադրության և շրջանառության կամ սննդի շղթայի փուլերում պետական վերահսկողության ապահովումը հետազոտության սկզբունքի կիրառմամբ։

3) սննդամթերքի անվտանգության գիտականորեն հիմնավորված ռիսկերի գնահատման, խորհրդատվության տրամադրման, ռիսկերի կառավարման ընթացքում դրանց գիտականորեն հիմնավորված գնահատականների հիման վրա որոշումների ընդունումը («ռիսկերի վերլուծության» սկզբունքը)։

4) սննդամթերքի անվտանգության համակարգի գործունեության վերաբերյալ հանրությանը հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվության տրամադրումը («թափանցիկության և շահառուների ներգրավման» սկզբունքը)։

5) սննդամթերքի անվտանգության ապահովման համար սննդի շղթայի բոլոր փուլերում գործառնություններ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ (ներառյալ անասնակեր և առաջնային գյուղատնտեսական մթերք արտադրողները, վերամշակողները, իրացնողները) օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառումը («տնտեսավարող սուբյեկտների պատասխանատվության» սկզբունքը)։

6) սպառողների առողջությանն սպառնացող վտանգի հավանականության առկայության դեպքում, երբ վտանգի լիարժեք գնահատման համար գիտական հիմքերը բավարար չեն կամ անորոշ են, ռիսկերի կառավարման նախագուշակական միջոցների կիրառումը («նախագուշակական» սկզբունքը)։

7) սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտարիայի ոլորտներում պետական հսկողության իրականացման միջազգային լավագույն փորձի, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման ապահովումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը («արդիականացման և առաջընթացի» սկզբունքը)։

8) պետական հսկողության ապահովումը սննդամթերքի անվտանգության, անասնահամաճարակային, բուսասանիտարական իրավիճակի, սննդամթերքի, կենդանական ծագման հումքի, կերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, լրացակերերի, անասնաբուժական դեղամիջոցների, բույսերի, բույսերի պաշտպանության միջոցների, պարարտանյութերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացների գնահատման և կանխորոշման հիման վրա («գնահատման և կանխորոշման» սկզբունքը)։

9) սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերում, ներթափանցման և տարածման կանխում ու վերացում («արագ արձագանքման» սկզբունքը)։

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Ծառայությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագման հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների համար նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ.

2) մշակում և իրականացնում է սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության բնագավառներում ծրագրեր, համագործակցում է միջազգային համապատասխան կառույցների հետ.

3) վերահսկողություն է իրականացնում ներմուծվող, տարանցիկ փոխադրվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների՝ արտահանող երկրի կողմից տրված բուսասանիտարական փաստաթղթերի համապատասխանության նկատմամբ.

4) իր լիազորությունների սահմաններում վերահսկողություն է իրականացնում բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման, արտահանման, պահպանման, փոխադրման, իրացման, օգտագործման գործընթացների, ինչպես նաև բուսասանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարման նկատմամբ.

5) Արցախի Հանրապետության տարածքում բույսերի վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու և դրանց հետագա տարածումը կանխարգելելու նպատակով պարբերաբար մոնիթորինգ՝ մշտադիտարկում է անցկացնում, իրականացնում է բուսասանիտարական վտանգի վերլուծություն, այլ ծառայությունների կողմից կատարվող վնասակար օրգանիզմների մոնիթորինգի անցկացման նկատմամբ վերահսկողություն, արդյունքների հիման վրա որոշում է կարանտին վնասակար օրգանիզմներից ազատ (զերծ) գոտիների սահմանները.

6) վերլուծում է գյուղատնտեսական, գեղազարդային մշակաբույսերի բուսասանիտարական վիճակը, անհրաժեշտության դեպքում իրազեկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասակար օրգանիզմների հայտնաբերման, կանխարգելման, տարածման, դրանց դեմ պայքարի համալիր միջոցառումների կիրառման մասին.

7) բուսասանիտարական վտանգի վերլուծության հիման վրա հաստատում է Արցախի Հանրապետության տարածքում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ցանկը.

8) վերահսկողություն է իրականացնում Արցախի Հանրապետությունում պետական գրանցում չստացած, օգտագործումից հանված, ժամկետանց և արգելված, բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր բույսերի պաշտպանության միջոցների ներմուծման, իրացման, օգտագործման բացառման, ագրարային կանոնների խախտմամբ կատարվող աշխատանքների նկատմամբ.

9) վերահսկողություն է իրականացնում իրավաբանական և ֆիզիկական անձանց հողային, արտադրական, առևտրային, պահեստային տարածքներում և կարգավորվող առարկաներում բույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների անցկացման նկատմամբ.

10) ֆիզիկական և իրավաբանական անձանց տալիս է բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման թույլտվություն և բույսերի, բուսական արտադրանքի ու կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրեր.

11) վերահսկողություն է իրականացնում հողերի մշակության, բույսերի և բուսական արտադրանքի արտադրության, ներմուծման, փոխադրման, պահպանման, իրացման, օգտագործման գործընթացներում բուսասանիտարական ստուգման և վնասակար օրգանիզմների դեմ տարվող պայքարի միջոցառումների անցկացման նկատմամբ.

12) ներմուծվող բեռներում հայտնաբերված կարանտին վնասակար օրգանիզմների մասին ծանուցում է արտահանող երկրի բուսասանիտարիայի բնագավառի պետական մարմին, բույսերի պաշտպանության միջազգային կազմակերպություններին և Արցախի Հանրապետության բոլոր սահմանային հսկիչ կետերին.

13) իրականացնում (վարում) է բուսական արտադրանք և կարգավորվող առարկաներ արտադրող, իրացնող, փոխադրող, ներմուծող և արտահանող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական բուսասանիտարական հաշվառումը (ռեգիստրը), մուտքագրում և պահպանում է վնասակար օրգանիզմների հայտնաբերման տեղեկատվական համակարգերը (տվյալների բազաները).

14) վերահսկողություն է իրականացնում բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների նկատմամբ, մոնիթորինգի իրականացման և բուսասանիտարական իրավիճակի գնահատման արդյունքում պլանավորում է վնասատուների դեմ պայքարի միջոցառումները.

15) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքում, կենդանական ծագման հումքում, կերերում, կերային հավելումներում, կերային խառնուրդներում, բուսական արտադրանքում անասնաբուժական դեղամիջոցների, ադոտոիչների, պեստիցիդների հայտնաբերման և դրանց մնացորդային քանակությունների նկատմամբ.

16) տրամադրում է կենդանիների պահվածքի, անասնապահական շինությունների շահագործման վերաբերյալ խորհրդատվություն, իր լիազորությունների սահմաններում մասնակցում է անասնապահական շինությունների շինարարության թույլտվության տրամադրման գործընթացին, վերահսկողություն է իրականացնում կենդանիների պահվածքի, անասնապահական շինությունների գոռհիգիենիկ և անասնաբուժասանիտարական նորմերի պահպանման նկատմամբ.

17) վերահսկողություն է իրականացնում հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ անասնաբուժական միջոցների, անասնաբուժական դեղամիջոցների և այլ պարագաների ու նյութերի ձեռքբերման, ներմուծման, պահպանման, բաշխման, օգտագործման, իրացման վաճառքի (գործընթացների) նկատմամբ.

18) վերահսկողություն է իրականացնում անասնաբուժական գործունեության, հանրապետությունում կենդանիների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և պայքարի համալիր անասնահամաճարակային և անասնաբուժասանիտարական միջոցառումների, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման, արհեստական սերմնավորման, բոնիտավորման, տոհմային գործի, տոհմանյութի արտադրության, կենդանիների սպանդի նկատմամբ, այդ գործընթացում համագործակցում է պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների հետ.

19) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնում կամ արգելում է սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում սննդամթերքի, սննդային հավելումների, սննդամթերքի հետ շփվող նյութերի, կենդանական ծագման մթերքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղերի, բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծումը, արտահանումը, արտադրությունը, պահպանումը, վերամշակումը, իրացումը, վաճառքը, կենդանիների սպանդ իրականացնող անձանց գործունեությունը, տեխնոլոգիական

սարքավորումների օգտագործումը, շահագործումը և տեխնոլոգիական գործընթացները, այդ թվում՝ սանիտարական կանոններով և հիգիենիկ նորմերով սահմանված պահանջների խախտումների դեպքերում, սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի և համապատասխանության բնագավառի օրենսդրության բացահայտված խախտումները և թերությունները վերացնելու նպատակով սահմանում է պարտադիր կատարման հանձնարարականներ, առաջադրանքներ, արձակում է արտադրանքի իրացման կասեցման կամ արգելման, խախտումների վերացման կարգադրագրեր, օրենքով սահմանված կարգով նշանակում է վարչական տույժեր և տուգանքներ.

20) կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների սննդային թունավորումների հայտնաբերման դեպքում տեղեկացնում է պետական սանիտարահիգիենիկ վերահսկողություն իրականացնող մարմնին, կազմակերպում և իրականացնում է համատեղ միջոցառումներ.

21) կազմակերպում և իրականացնում է օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր ու պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների՝ Արցախի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխարգելող միջոցառումներ, այդ ուղղությամբ համագործակցում է պետական և շահագրգիռ մյուս մարմինների հետ.

22) վերահսկողություն է իրականացնում կենդանիների, սննդամթերքի կենդանական ծագման հումքի, կերերի, լրացակերերի, անասնաբուժական դեղամիջոցների ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման, ինչպես նաև ներքին փոխադրումների, արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, իրացման գործընթացների նկատմամբ.

23) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման, արտադրության, ինչպես նաև իրացման փուլում գենետիկորեն փոփոխված օրգանիզմների (ԳՓՕ-ի) նկատմամբ.

24) աջակցում է սննդամթերքի արտադրության բնագավառում վտանգի աղբյուրի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրմանը, վերահսկողություն է իրականացնում ներդրված համակարգի նկատմամբ.

25) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, կենդանական ծագման հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղամիջոցների, բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի, ինչպես նաև կենդանիների դիակների վնասագերծման, ոչնչացման կամ տեխնիկական օգտահանման գործընթացների նկատմամբ.

26) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի, համապատասխանության գնահատման բնագավառներում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանցից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստանում է համապատասխան տեղեկատվություն, հաշվետվություններ, սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է վերլուծություն, ստուգում արձանագրված տվյալների հավաստիությունը.

27) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական ուղեկցող, լաբորատոր հետազոտությունները հավաստող փաստաթղթեր տալու, հաշվառելու և օգտագործելու գործընթացների նկատմամբ.

28) վերահսկողություն է իրականացնում սննդի արտադրության, պահպանման, տեղափոխման, վերամշակման, իրացման (արտադրության և շրջանառության փուլեր) բոլոր փուլերում սննդամթերքի անվտանգությանն առնչվող նորմատիվ փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջների պահպանման նկատմամբ.

29) չափագիտական վերահսկողություն է իրականացնում փաթեթավորված, չափաճրարված սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային

հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ապրանքների նկատմամբ.

30) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կերերի, լրացակերերի, կերային հավելումների, կերային խառնուրդների ներմուծման, արտահանման, արտադրության, պահպանման, փոխադրման, վերամշակման և իրացման գործընթացներում մակնշմանը, համապատասխանության գնահատմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ.

31) վերահսկողություն է իրականացնում բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների որակին, անվտանգությանը, համապատասխանությանը ներկայացվող պահանջների նկատմամբ՝ ներմուծման, արտահանման, արտադրության, պահպանման, փոխադրման, վերամշակման և իրացման գործընթացներում.

32) ընդունում է սննդի արտադրության և գյուղատնտեսության օբյեկտների, սարքավորումների, տեխնոլոգիական գործընթացները ժամանակավորապես դադարեցնելու մասին որոշումներ՝ մինչև սանիտարական նորմերի ու կանոնների, հիգիենիկ նորմատիվների և հակահամաճարակային ռեժիմների արձանագրված խախտումները վերացնելը.

33) մարդու առողջության վրա սննդային հավելումների վնասակար ազդեցության վտանգի դեպքում ժամանակավորապես արգելում է սննդամթերքի մշակման և արտադրության ոլորտում սննդային հավելումների կիրառումը, գյուղատնտեսական բույսերի ու կենդանիների աճի համար խթանիչների օգտագործումը՝ մինչև մշակողի կամ արտադրողի կողմից դրանց անվտանգության վերաբերյալ գիտափորձնական հիմնավորում ստանալը.

34) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագման հումքի, կերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների որակի և անվտանգության, աղտոտումից պաշտպանության, կենդանիների առողջության պահպանման համար ոլորտի սանիտարական և անասնաբուժական կանոններին, հիգիենիկ նորմերին սննդամթերքի, կենդանական ծագման հումքի, կերի, կերային խառնուրդի, կերային հավելման, կենդանիների, բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, անասնաբուժական դեղամիջոցների և բույսերի պաշտպանության միջոցների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների համապատասխանության նկատմամբ.

35) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի արտադրության և շրջանառության փուլերի համար նախատեսված տարածքների կառուցման, կահավորման, վերանորոգման՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված տվյալ սննդամթերքին ներկայացվող պահանջներին համապատասխանության նկատմամբ.

36) ընդունում է սննդի արտադրության և գյուղատնտեսության մեջ հումքի նոր տեսակների կիրառումն ու իրացումը կասեցնելու մասին որոշում, այն դեպքում, երբ դրանք փորձաքննության արդյունքով մարդկանց կյանքի և առողջության համար ճանաչվել են վտանգավոր.

37) Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով իրականացնում է ստուգումներ, ամփոփում և վերլուծում է ստուգումների ընթացքում արձանագրված արդյունքները.

38) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր իրավասության սահմաններում վարում է վարչական վարույթները, ընդունում համապատասխան որոշումներ և օրենքով նախատեսված դեպքերում կիրառում պատասխանատվության միջոցներ.

39) իրականացնում է վերահսկողություն նախատեսված ստուգումների ժամանակ հսկող տեսուչների իրականացված աշխատանքների նկատմամբ.

40) իր իրավասության սահմաններում ընդունում է օրենքով սահմանված կարգով գերատեսչական իրավական ակտեր:

41) համագործակցում է սննդամթերքի, անասնաբուժական և բուսասանիտարական անվտանգության ապահովման նպատակով միջազգային և տարածաշրջանային համապատասխան կազմակերպությունների հետ և ապահովում տեղեկատվության փոխանակումը:

42) իրականացնում է սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանիների, կենդանական ծագման հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, բույսերի, բուսական ծագման արտադրանքի, կարգավորվող առարկաների, արտադրության, պահպանման, վերամշակման, իրացման (վաճառքի), անասնաբուժական դեղամիջոցների և բույսերի պաշտպանության միջոցների արտադրության, պահպանման, իրացման (վաճառքի) գործընթացների մշտադիտարկում, ուսումնասիրություն և իրավիճակի վերլուծություն:

43) իրականացնում է օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Ծառայությունը կառավարում է ծառայության պետը (այսուհետ՝ պետ), որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի (այսուհետ՝ նախարար) ներկայացմամբ:

12. Պետն ունի տեղակալ(ներ), որին (որոնց) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ պետի ներկայացմամբ:

13. Պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով ու կարգադրություններով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

14. Պետն իրականացնում է ծառայությանը վերապահված խնդիրներն ու գործառնություններն ու պատասխանատու է սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների վերահսկողության քաղաքականության մշակման և իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

15. Պետը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին, Արցախի Հանրապետության կառավարությանը և նախարարին:

16. Պետը՝

1) իր իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով ընդունում է գերատեսչական իրավական ակտեր:

2) ղեկավարում է ծառայության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար:

3) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ նախարարի միջոցով առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության կառավարություն:

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրագրեր և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ ծառայության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ ծառայության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

5) հաստատում է ծառայության հաստիքացուցակը:

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում ծառայության քաղաքացիական ծառայության

պաշտոններում, ինչպես նաև աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

7) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին ու օգնականներին.

8) օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է պետի տեղակալ(ներ)ի, ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների սահմանները.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող ծառայության աշխատակազմի ղեկավարի, ծառայության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների հրամանները, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների որոշումները, կարգադրությունները և կարգադրագրերը.

10) լսում և քննում է Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացվելիք ծառայության աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների ու տարեկան հաշվեկշռի գործունեության ստուգման արդյունքները: Ծառայության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականն ու ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները, աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը ներկայացնում է նախարարին, որը լսում և իր առաջարկությունների հետ միաժամանակ ներկայացնում է Արցախի Հանրապետության կառավարություն.

11) իրականացնում է վերահսկողություն ծառայության աշխատակազմին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ.

12) նախարարի միջոցով Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը.

13) նախարարի միջոցով Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության աշխատողների թիվը.

14) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով շնորհում է Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ.

15) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շնորհում է դասային կոչումներ.

16) ստեղծում է խորհրդակցական մարմիններ.

17) վերադատության կարգով քննում և լուծում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բերված (տրված) գանգատները և բողոքները.

18) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

17. Պետի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, պետի պարտականությունները կատարում է պետի տեղակալը (տեղակալներից մեկը):

18. Պետի տեղակալը՝

1) համակարգում է ծառայության համակարգի աշխատանքները.

2) իր լիազորության սահմաններում համակարգում է ծառայության գործունեությունը՝ ծառայության իրեն հանձնարարված ոլորտում վերահսկողության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ ծառայության աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև իր ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

3) ծառայության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է ծառայության համակարգի մարմիններին տրվող որոշակի հանձնարարականներ և

առաջադրանքներ, իրականացնում է վերահսկողություն դրանց կատարման նկատմամբ.

4) պետի հանձնարարությամբ իրականացնում է պետի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

5) համակարգում է իրեն հանձնարարված ոլորտներում ծառայության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

6) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

7) իրեն հանձնարարված ոլորտներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) պարբերաբար պետին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված ոլորտներում աշխատանքների իրականացման ընթացքի մասին.

9) ապահովում է իրեն հանձնարարված ոլորտներում պետի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում պետին.

10) պետին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասություններին վերաբերող հարցերի մասին.

11) պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

19. Պետը կարող է ունենալ խորհրդականներ, մամուլի քարտուղար և օգնականներ, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

20. Ծառայության աշխատակազմի նպատակը և խնդիրը ծառայությանը՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին ծառայության մասնակցության ապահովումն է:

21. Ծառայության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

22. Ծառայության աշխատակազմը գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

23. Ծառայության աշխատակազմն իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

24. Ծառայության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

25. Ծառայության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

26. Ծառայության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Ծառայության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

27. Ծառայության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Ծառայության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև ծառայության

լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

28. Ծառայության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

29. Ծառայության աշխատակազմի անվանումն է «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

30. Ծառայության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Թումանյանի 115:

VI. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

31. Ծառայության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից ծառայության աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և ծառայության աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

32. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու ծառայության աշխատակազմին հանձնված գույքը:

33. Ծառայության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

34. Արցախի Հանրապետության կառավարության կողմից ծառայության աշխատակազմին հանձնված գույքը ենթակա է հաշվառման՝ կառավարության սահմանած կարգով:

VII. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

35. Ծառայության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումները:

36. Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է պետը:

37. Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

VIII. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

38. Ծառայության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունը, նախարարը և պետը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում: Ծառայության աշխատակազմը ղեկավարում է ծառայության աշխատակազմի ղեկավարը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

39. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է ծառայության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է ծառայության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

3) որոշում է ծառայության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) հաստատում է ծառայության աշխատակազմի կառուցվածքը.

5) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

40. Ծառայության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, ծառայության պետի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է ծառայության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության և պետի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

41. Ծառայության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Ծառայության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

42. Ծառայության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի, պետի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

43. Ծառայության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից մեկը՝ պետի հրամանով:

44. Ծառայության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու համար:

2) օրենքով, այլ իրավական ակտերով, հիմնադրի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է ծառայության աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ:

5) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

6) պետի հաստատմանն է ներկայացնում ծառայության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է ծառայության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, ծառայության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար:

7) պետին է ներկայացնում առաջարկություններ ծառայության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

8) կազմակերպում է ծառայության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը:

9) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով շնորհում է Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ:

10) կազմակերպում է ծառայությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը:

11) վերահսկում է ծառայության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը:

12) պետի ստորագրմանն է ներկայացնում պետի հրամանները:

13) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ:

14) կազմակերպում է ծառայության գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

15) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

45. Ծառայության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է ծառայության աշխատակազմի ֆինանսահաշվապահական ծառայությունները, գործում է ծառայության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունները:

46. Ծառայության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, ծառայության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

IX. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

47. Ծառայության աշխատակազմը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

48. Ծառայության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

49. Ծառայության աուդիտորի պարտականությունները կարող են իրականացվել Արցախի Հանրապետության կառավարության աշխատակազմի աուդիտորի կողմից:

X. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐՈՒՄԸ

50. Ծառայության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2017թ.

N 266-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N2 հավելվածի N1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի դեկտեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1
ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵԼԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	(800,000.0)
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	-	(800,000.0)
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	-	(800,000.0)
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	-	-	(800,000.0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	(800,000.0)
03			ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆ-ԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	-	-	-	(10,000.0)
	3		Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	-	-	-	(10,000.0)
		2	Իրավական պաշտպանություն	-	-	-	(10,000.0)
		01	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ելթակա ծախսեր	-	-	-	(10,000.0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	(10,000.0)
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	180,000.0
	7		Այլ բնագավառներ	-	-	-	180,000.0
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	-	-	-	180,000.0
		01	Պատվիրակությունների ընդունելություններ	-	-	-	180,000.0
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	-	-	-	180,000.0
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԴԱՄՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	-	-	630,000.0
	2		Այլ ծախսեր	-	-	-	630,000.0
		1	Այլ ծրագրեր	-	-	-	630,000.0

		02	Կապիտալ ներդրումներ	-	-	-	800,000.0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	-	800,000.0
		07	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	-	-	-	(170,000.0)
			ԼՂՀ կառավարություն	-	-	-	(170,000.0)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2017թ.

N 274-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 19-Ի N 423-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 19-ի «Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 423-Ն որոշման հավելվածով հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2017թ.

N 275-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 26-Ի N 61 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 61 որոշման 2-րդ կետով հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2017թ.

N 278-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Հակ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,09 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի, փոքր հիդրոէլեկտրակայանի ջրհավաք ավազան և ճնշումային խողովակաշար կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2017թ.

N 279-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,48 հեկտար արոտավայրը և բնակավայրերի նպատակային նշանակության 0,64 հեկտար այլ հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի, փոքր հիդրոէլեկտրակայանի ջրհավաք ավազան և ճնշումային խողովակաշար կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 17-Ն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 03-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. մարտի 20-ի «Դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Հավելվածի 3-րդ, 8-րդ և 12-րդ կետերում «ամփոփման» բառից հետո լրացնել «և վիճակագրության» բառերը.

2) Հավելվածի 27-32-րդ կետերի «1-ին» բառը փոխարինել «առաջին» բառով.

3) Հավելվածի 6-րդ, 15-32-րդ կետերի «Լ,ՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

4) Հավելվածի 30-րդ կետի «դատավորի» բառը փոխարինել «աշխատակազմի» բառով.

5) 30-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 30.1-ին կետ՝

30.1	Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի գործավար	12	կրտսեր, 1-ին
------	---	----	--------------

6) «Ընդամենը» տողի «Հաստիքների քանակը» սյունակի «76» թիվը փոխարինել «88» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

14 դեկտեմբերի 2017թ.

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 19-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի և 150-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. դեկտեմբերի 28-ի №15-Ն որոշմամբ հաստատված դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումները ներառել «Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայություն» Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կազմում:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. դեկտեմբերի 28-ի «Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների ցանկը հաստատելու մասին» №15-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

14 դեկտեմբերի 2017թ.
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ N° 20-Ն

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ
ՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով և 150-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայություն» Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման հաստիքների քանակը և պաշտոնների անվանացանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. դեկտեմբերի 28-ի «Դատական կարգադրիչների ծառայության հաստիքների քանակը և պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N° 16-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

14 դեկտեմբերի 2017թ.
ք. Ստեփանակերտ

Հավելված
Արցախի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2017թ. դեկտեմբերի 14-ի թիվ 20-Ն որոշման

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ**

ՀՀ	Պաշտոնների անվանումը (հաստիք)	Հաստիք- ների քանակը	Պաշտոն- ների խումբը	Պաշտոն- ների ենթա- խումբը
1	Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության պետ	1	գլխավոր	առաջին
2	Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության ավագ մասնագետ	1	առաջատար	առաջին
3	Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության ավագ դատական կարգադրիչ	2	կրտսեր	առաջին
4	Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության դատական կարգադրիչ	11	կրտսեր	երկրորդ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԴԵԿԱՎԱՐ

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վերաքննիչ դատարանի 2017թ. հոկտեմբերի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

2017թ. հոկտեմբերի 26-ին Կարինե Դանիելյանը և ներկայացուցիչ Ռաֆիկ Մարտիրոսյանը վճռաբեկ բողոք են ներկայացրել Գերագույն դատարան:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2017թ. նոյեմբերի 10-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. Առաջին աստանի դատարանը 2017թ. հոկտեմբերի 3-ին որոշում է կայացրել Կարինե Դանիելյանի և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Մարտիրոսյանի բողոքը մերժելու մասին: Որոշումը հրապարակվել է նույն օրը /ն.թ.150/:

2. Առաջին աստանի դատարանի որոշումը կողմերին է ուղարկվել 2017թ. հոկտեմբերի 5-ի գրությամբ /ն.թ.162-163/:

3. Վերաքննիչ բողոքը Կարինե Դանիելյանը և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Մարտիրոսյանը ներկայացրել են 2017թ. հոկտեմբերի 16-ին /ն.թ.167-180/:

4. Վերաքննիչ դատարանի 2017թ. հոկտեմբերի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ /ն.թ.183-184/:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակները նշել են, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ, 394-րդ, 397-րդ և 400-րդ հոդվածները և սույն նյութով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, թույլ է տվել դատական սխալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Ըստ բողոքաբերների՝ Առաջին աստանի դատարանի 2017թ. հոկտեմբերի 3-ի որոշումն իրենց ուղարկվել է 2017թ. հոկտեմբերի 5-ին (դրա մասին է վկայում դատավորի օգնականի ստորագրությամբ դատական ակտը բողոքաբերներին ուղարկելու մասին գրությունը), հետևապես Առաջին աստանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել 2017թ. հոկտեմբերի 6-ից, քանի որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝ ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքը սկսվում է առաջին օրվա գրո ժամից և վերջանում է վերջին օրվա ժամը քսանչորսին: Ժամկետի սկիզբը նույնիսկ 2017թ. հոկտեմբերի 5-ից հաշվելու դեպքում էլ բողոքը չի կարելի համարել ժամկետանց, քանի որ 2017թ. հոկտեմբերի 15-ն ըստ օրացույցի ոչ աշխատանքային օր է:

Բողոքաբերները գտնում են, որ Վերաքննիչ դատարանը, բողոքարկման ժամկետը քննարկելիս սխալ վերլուծելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածները, բողոքարկման ժամկետի սկիզբը հաշվել է դատական ակտը հրապարակելու պահից՝ 2017թ. հոկտեմբերի 3-ից, ինչն

անթույլատրելի է, քանի որ այն անդրադարձել է դիմողի դատական պաշտպանության իրավունքի իրացման վրա:

Վերը նշված հիմնավորումներով՝ բողոքարկները խնդրել են բեկանել ԸԻԴ 0006/11/17 քրեական նյութով Վերաքննիչ դատարանի 2017թ. հոկտեմբերի 19-ի որոշումը:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման գործառնության իրացմամբ: Գերագույն դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման համար սահմանված ժամկետների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Սույն գործով վճռաբեկ բողոքում բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է, արդյոք, Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է բաց թողնելով այն ներկայացնելու համար ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ժամկետը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե որն է առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը. դատական ակտը նիստերի դահլիճում հրապարակելու, թե այն շահագրգիռ անձին ուղարկելու կամ դատական ակտը ստանալու պահը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին:

Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան թիվ, ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ձերբակալման տակ պահելու ժամկետն սկսվում է արգելանքի վերցնելու պահից:

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գտնվող կամ բժշկական հաստատությունում տեղավորված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանքի տակ

պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:

5. Պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է դատավարական փաստաթղթերում՝ համապատասխան նշումով: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ:»

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին:»

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «վերաքննիչ բողոք բերվում են առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության

չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»։ Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում։

Վերլուծության ենթարկելով վերը նշված քրեադատավարական նորմերը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածով նախատեսված բողոքների քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կայացրած գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենսդիրը սահմանել է տասնօրյա ժամկետ՝ որոշումը հրապարակվելու պահից։ Մինևույն ժամանակ, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածով սահմանված չէ այն ժամկետը, որի ընթացքում առաջին ատյանի դատարանը որոշման պատճենը պետք է ուղարկի դիմողին և վարույթն իրականացնող մարմնին։

Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքարկման ժամկետների սկիզբը դատական ակտի հրապարակման պահից համարելու պայմաններում նման կարճ ժամկետները չպետք է խոչընդոտեն շահագրգիռ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը։ Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ Առաջին ատյանի դատարանը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի գործն ըստ էության չլուծող այդպիսի դատական ակտը հասու լինի շահագրգիռ անձին դրա հրապարակման օրը, իսկ անհնարինության դեպքում՝ հնարավորինս սեղմ ժամկետում, քանի որ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր տնօրինության տակ ունենա վիճարկվող դատական ակտը։

Սույն նյութի ուսումնասիրությունից դիտվում է, որ Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 3-ին կայացրել և հրապարակել է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, որի հրապարակմանը ներկա է եղել Կարինե Դանիելյանի ներկայացուցիչ Ռաֆիկ Մարտիրոսյանը։ Որոշման եզրափակիչ մասում նշվել է, որ այն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում։ Որոշումը կողմերին է ուղարկվել 2017թ. հոկտեմբերի 5-ին։ Վերաքննիչ բողոքը բերվել է 2017թ. հոկտեմբերի 16-ին։

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 2017թ. հոկտեմբերի 19-ի որոշումը՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելու մասին, բխում է վերը նշված օրենսդրական կարգավորումներից։

Գերագույն դատարանն արձանագրում է նաև, որ բողոքաբերները Առաջին ատյանի դատարան բողոքարկման համար ժամկետը վերականգնելու մասին միջոնորդություն չեն ներկայացրել և վերաքննիչ բողոքում բաց թողնված ժամկետի վերականգնման հարցն ընդհանրապես քննարկման առարկա չեն դարձրել։

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի փաստարկները՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ, անհիմն են, հետևաբար վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման։

Ելնելով վերոգրյալից, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն նյութով պետք է կիրառել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ

հողվածի 2-րդ մասով նախատեսված լիազորությունը և վճռաբեկ բողոքը մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարինե Դանիելյանի և նրա ներկայացուցիչ Ռաֆիկ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԱՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հետո՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**